



## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Գոնկրեսի Արժանի Պատասխանը՝ Էրտողանին

Մայիս 16-ին, Ուաշինգտոնի մեջ Թուրքիոյ դեսպանի նստավայրին առջեւ տեղի ունեցած սկանդալի արձագանգները տակաւին կը շարունակուին: Միացեալ Նահանգներու Գոնկրեսը պատրաստ չէ լուր անցնելու նախագահ Էրտողանի թիկնապահներու արարքներուն վրայէն, երբ խաղաղ ցուցարարներ խոշտանգումի ենթարկուեցան ու արիւնլուայ վիճակներու մէջ ուղարկուեցան հիւանդանոցներ:

Յունիս 6-ին, Ներկայացուցիչներու Տունը միաձայնութեամբ վաւերացուց բանաձեւ մը՝ խիստ կերպով դատապարտելով այդ օրուայ իրադարձութիւնները ու պահանջելով, որ արարքներու պատասխանատուները ենթարկուին դատական հետապնդումներու, միաժամանակ պահանջելով Ամերիկեան կառավարութենէն, որպէսզի միջոցներ ձեռք առնուին ապագային կանխելու համար նման դէպքերու կրկնութիւնը:

Թուրքիոյ նախագահը մեծ ակնկալիքներով ժամանած էր Ուաշինգթոն, իր առաջին դէմ առ դէմ հանդիպումը ունենալու Միացեալ Նահանգներու նախագահ Տամուլտ Թրամփի հետ: Նոր վարչակարգի օրով, Էրտողան կը յուսար արժանանալ սիրալիք ընդունելութեան մը, որ պիտի բարձրացներ իր դիրքը ու հեղինակութիւնը թուրք ժողովուրդի մօտ ու նաեւ միջազգային հանրութեան առջեւ:

Թուրքիոյ նախագահի Ուաշինգթոն այցելութիւնը սակայն վերածուեցաւ կատարել ձախողութեան: Նախ, Սպիտակ Տունէն ներս Թրամփի հետ հանդիպումը տեւեց միայն 23 վայրկեան: Մերժումի արժանացաւ Էրտողանի առաջարկը՝ դադարեցնելու Ամերիկեան օժանդակութիւնը Սուրիոյ մէջ գործող քրտական զինեակներուն, որոնք կը պատրաստուին գրաւելու «խլամական պետութեան» մայրաքաղաք Ռաքքան եւ փոխարէնը այդ գործը վստահելու թուրքիոյ համակիր ուժերուն: Նոյնքան կատճատել էր հանդիպումին յաջորդած միատեղ մամուլային ասուլիսը, որ անտեսուեցաւ Ամերիկեան հեռատեսիլի լիքներուն կողմէ: Փոխարէնը, մամուլի ուշադրութիւնը կեդրոնացաւ Մայիս 16-ի դէպքերուն վրայ, երբ Էրտողանի աչքերուն առջեւ ու հաւանաբար իր հրամանով, Ամերիկահպատակ խաղաղ ցուցարարներ բռնութեան ենթարկուեցան իրենց իսկ երկրի մայրաքաղաք Ուաշինգթոնի փողոցներուն վրայ:

Գոնկրեսի այս քայլով, արժանի պատասխան տրուեցաւ թրքական կառավարութեան: Այժմ կարգը դատական մարմիններուն է, որպէսզի անցնին յաջորդ քայլերուն:

«ՄԱՍԻՍ»

### Մերժ Սարգսեան Զերքեց Իր Եւ Վարչապետի Միջեւ Լարուածութեան Մասին Լուրերը



Մերժ Սարգսեան եւ Կարէն Կարապետեան

Վերջին օրերուն Հայաստանեան մամուլին մէջ տարածուած լուրերու համաձայն, վարչապետ Կարէն Կարապետեան կը պատրաստուի հրաժարական ներկայացնելու, նախագահ Սարգսեանի հետ յառաջ եկած տարակարծութիւններուն պատճառաւ:

Յունիս 6-ին, Տաուշի շրջան կատարած իր այցելութեան ընթացքին, նախագահ Սարգսեան ստիպուած եղաւ անդրադառնալ շրջանառուող այս լուրերուն, յայտարարելով, որ վարչապետ Կարէն

Կարապետեան հրաժարական տալու որեւէ պատճառ չունի. Մերժ Սարգսեան հերքեց մամուլի տեղեկութիւնները, թէ իր եւ վարչապետ Կարէն Կարապետեանի միջեւ յարաբերութիւնները լարուած են:

Լրագրողներու հետ ձեպագրուող ժամանակ նախագահը յայտարարեց. «Պարբերաբար հրապարակ նետուող լուրերը իբր գոյութիւն ունեցող հակասութիւններ, հակամարտութեան մասին՝

Շար.ը էջ 5

### Ամերիկահայ Կազմակերպութիւններու Զանդիպումը Հայաստանի Դեսպան Գրիգոր Յովհաննիսեանի Զետ



Ամերիկահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչները դեսպան Յովհաննիսեանի հետ

Մայիսի 31-ին, Նիւ Եորքի մէջ տեղի ունեցաւ Միացեալ Նահանգներու Հայկական Կազմակերպութիւններու Ներկայացուցիչներու միօրեայ հանդիպումը, նախաձեռնութեամբ Ուաշինգթոնի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Գրիգոր Յովհաննիսեանի:

Սոյն հանդիպման ներկայ էին Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ գերջ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, ինչպէս

նաեւ ԱՄՆ-ի հայկական տարբեր կազմակերպութեան ներկայացուցիչները:

Հանդիպման զլխաւոր նիւթն էր «Միացեալ Նահանգներ-Հայաստան, երկկողմանի յարաբերութիւններ, առաջխաղացում եւ հեռանկարներ»: Այս կապակցութեամբ ընդարձակ զեկուցումով հանդէս եկաւ դեսպան Գրիգոր Յովհաննիսեանը:

Շար.ը էջ 7

### Ղարաբաղի Մէջ Համաձայն Չեն Նոր Պատերազմի Հաւանականութեան Մասին ICG-ի Չեկոյցին Զետ

Հակառակ շիման գիծին վրայ ածող լարուածութեան, պաշտօնական Ստեփանակերտը համաձայն չէ նոր պատերազմի հնարանականութեան մասին Միջազգային ձգնաժամային Խումբի (ICG) փորձագէտներու եզրակացութեան հետ:

Ռազմական հակամարտութիւններու վերլուծութեամբ զբաղուող միջազգային այս կազմակերպութիւնը շուրջ 40 էջանի զեկոյց հրատարակած է՝ եզրակացնելով՝ «Լեռնային Ղարաբաղի գլխուն պատերազմի ամպեր կը կուտակուին»:

Լեռնային Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Բաբայեան «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է, որ զեկոյցը, իրենց կարծիքով, միակողմանի է եւ կ'արտայայտէ միայն փորձագէտներու կարծիքը:

Շար.ը էջ 4

### Թուրքիոյ Ոստիկանութիւնը Դիտաւորեալ Չէ Կանխած Տիմրի Սպանութիւնը

Հրանդ Տինքի սպանութեան գործով հերթական դատական նիստին ներկաները լսած են վկաներուն:

Ինչպէս կը տեղեկացնէ Պոլսոյ հայկական «Ակօս»-ը, դատարանին մէջ վկայութիւն տուած է ոստիկանութեան նախկին բարձրաստիճան պաշտօնէն Լեւոն Մարմէլը՝ նշելով, որ սկիզբէն Տինքի սպանութեան հետաքննութիւնը խիստ թերի ընթացած է:

Ան նշած է, որ հետաքննութեան ժամանակ չէ թոյլատրուած օգտուիլ հետախուզութեան յատուկ LOG տուեալներէն, որոնք ամէն ինչ կը բացայայտէին: «Ինձի ըսին, որ եթէ LOG տուեալները ներկայացնենք, ոստիկանութիւնը բարդ կացութեան մէջ կը յայտնուի, եւ պէտք է լսենք Պոլսոյ մէջ ինչ կ'որոշեն: Եթէ թաքցնեն LOG-ի տուեալները, ուրեմն այստեղ դիտաւորութիւն կայ: Նման սպանութիւնը առանց վերիններու թոյլտուութեան չէր կրնար տեղի ունենալ վայրի մը մէջ, երբ ամբողջ հետախուզութիւնը այնտեղ էր», ըսած է Լեւոն Մարմէլը՝ աւելցնելով, որ Տինքի սպանութեան բացայայտմանն ուղղուած իր աշխատանքներու համար 2011-ին սպառնալիքներ ստացած է:

**ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**Կարէն Կարապետեանի Ձեռքը  
Սերժ Սարգսեանի մօտ Խուճա՞պ է**

**ՅԱԿՈԲ ԲԱՐԱԼԵԱՆ**

Թէեւ Սերժ Սարգսեանը որեւէ կերպ չի բացայայտում 2018-ից յետոյ իր անելիքի, ծրագրի վերաբերեալ որեւէ բան, շրջանցելով հարցերն ու պահպանելով խորհրդաւոր անորոշութիւնը, այդուհանդերձ նրա ծրագրի մի հանգամանք ակնյայտ է՝ վարչապետ Կարէն Կարապետեանի արժէքը կրում: Առնուազն այդ մասով Սերժ Սարգսեանի ծրագիրը առաւել քան յստակ եւ որոշակի է:

Թէ որն է դրա նպատակը, այդքան էլ պարզ չէ: Առաջին հայեցողից աներկբայ նպատակ է թւում այն, որ այդպիսով Սերժ Սարգսեանը լուծում է Կարապետեանին 2018-ին վարչապետ չվերանշանակելու հարցը: Այս տրամաբանութեանը բաւականաչափ անդրադարձ եղել է մամուլում, տարբեր փորձագէտների եւ քաղաքական գործիչների դիտարկումներում՝ արժեքը կը, որպէսզի հասունանայ նրա փոփոխութիւնը:

Միևս կողմից, իսկ հնարաւոր է տարբերակ, երբ Սերժ Սարգսեանը Կարէն Կարապետեանին արժէքը կրում է անելանելիութիւնից, նրա դեմ ալլ «խաղ չունենալուց», նրան չվերանշանակելու տարբերակ չունենալուց:

Ներկայում այդ վարկածը կարող է աներեւակայելի թուալ, եւ հազիւ թէ որեւէ մէկը դրան լրջօրէն վերաբերի, Սերժ Սարգսեանից բացի: Ընդհին այն է, որ Սերժ Սարգսեանը խորհրդարանի ընտրութիւնից յետոյ չափազանց կտրուկ եւ մեծ թափով է սկսել Կարէն Կարապետեանի արժէքը կրածն ուղղուած գործընթացը, իսկ դա կարծես թէ այդքան էլ բնորոշ չէ Սարգսեանի հանգիստ ու հանդարտ ոճին, որը հաճախ բնորոշուած է շախմատով, թէեւ շատ աւելի նման է ֆուտպոլային «տիկիտակային», որ կիրառում էր սպանական Բարսելոնան՝ չափազանց շատ կոմբինացիաներով, փոխանցումներով, այդ թւում նաեւ հաճախակի հետ փոխանցումներով, մինչեւ որ կը ստեղծուէր մրցակցի դարպասին հարուածի ամենաօպտիմալ, ամենաերաշխաւորուած, վրիպելու ամենաքիչ ռիսկը պարունակող դրուժիւնը:

Մինչդեռ այդ դէպքում Սերժ Սարգսեանը ուղղակի նետուել է

գրոհի, առանց որեւէ «հետ փոխանցման»:

Ժամանակն իհարկէ քիչ է, բայց դա էլ նշանակում է, որ Սարգսեանն այդքան էլ վստահ չէ յաջողութեանը, եւ նկատուած է որոշակի խուճապ, անդառնալիութեան կամ անշրջելիութեան զգացում:

Բանն այն է, որ վարչապետի հարցում Սերժ Սարգսեանն ըստ ամենայնի կորցնում է յոյսը, եւ Կարէն Կարապետեանին արժէքը կը նրա համար ՀՀ նախագահի պաշտօնում շանսը պահելու միջոցն է: Եթէ Սերժ Սարգսեանը չի կարողանում նշանակուել վարչապետ կամ նշանակել սեփական վարչապետին, ապա իրավիճակը գոնէ ՀՀ նախագահի պաշտօնում վերահսկողութեան տակ պահելու եւ 2022-ից առաջ վերադասաւորման յոյսը պահպանելու համար պէտք է առաւելագոյն արժէքը կը նրան, ում 2018-ին ստիպուած կը լինի առաջադրել:

Կարէն Կարապետեանը Սերժ Սարգսեանի խուճապը, որ արտայայտուած է իր դեմ տարերային գրոհով, փորձում է դարձնել իր զէնքը: Նա բացուել է Սերժ Սարգսեանի առաջ եւ թոյլ է տալիս թիրախաւորել իրեն որքան հնարաւոր է: Կարապետեանի մարտավարութիւնը ուսցիտուն է՝ հարուածից խուսափելն անհրաժեշտ է, հետեւաբար պէտք է հնարաւորինս բացուել եւ իմաստազրկել կամ արժէքը կը հարուածը, այդպիսով աւելի ու աւելի ակնյայտ դարձնելով, որ իր անարդիւնաւետութեան պատճառը Սերժ Սարգսեանն է:

Սերժ Սարգսեանն է, թէ ոչ, այդ հարցն այլեւս երկրորդական է: Հարուածողը Սերժ Սարգսեանն է, դա ակնառու է, կամ հարուածում են նրա անունից: Հետեւաբար Սերժ Սարգսեանը խանգարողն է:

Հարցն այն է, թէ կը դիմանա՞յ արդեօք Կարապետեանը, մինչ հարուածների լիակատար արժեքը կը: Նա պարզել է իր պաշտպանական վահանը՝ Հայաստանի ներդրողների ակումբը, Սամուէլ Կարապետեանի գլխաւորութեամբ: Սերժ Սարգսեանն այդ վահանը կտրելու համար պէտք է գոնի աւելի մեծ ֆինանսներ: Նա փնտրում է, առայժմ ապարդիւն:

«ԼՐԱԳԻՐ»

**Պատերազմի Ամպերը Ղարաբաղում Եւ Մոսկուայի Միակ Նպատակը**

**ԹԱՍԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ**

Միջազգային ճգնաժամային խումբը (International Crisis Group), որը զբաղուած է տարբեր երկրներում հակամարտութիւնների ուսումնասիրութեամբ եւ պատերազմական իրավիճակների կանխմամբ, գեկոյց է հրապարակել՝ անդրադառնալով դարաբաղեան հիմնախնդրին եւ հայաստանատարաբանական յարաբերութիւններին ներկայ փուլին:

Կազմակերպութեան փորձագէտների կարծիքով՝ Լեռնային Ղարաբաղում 2016-ի ապրիլեան բռնութիւններից մէկ տարի անց Հայաստանն ու Ատրպէյճանն աւելի քան երբեք մօտ են պատերազմական իրավիճակին՝ 1994-ի հրադադարի կնքումից ի վեր:

«Քաղաքական եւ անվտանգութեան պայմանները, որոնք հակամարտութեան սրման հանգեցրին 2016-ի Ապրիլին, աւելի սուր են դարձել, եւ երկու կողմն էլ արդէն իսկ սկսուած է սկսալայցի նոր ալիք է ստեղծում: 2017-ի Յունուարի կէսերից ի վեր ծանր հրետանու եւ հակատանկային զէնքերի կիրառմամբ ողբերգական միջադէպեր են տեղի ունենում: Մայիսին լարուածութեան զգալի սրում է նկատուել՝ հաշուի առնելով շփման գծի երկայնքով գոտուղ բնակելի շրջաններում ինքնակառավարող հրթիռների կիրառման մասին զեկոյցները: Այս լարուածութիւնը կարող է վերածուել լայնածաւալ հակամարտութեան, որն էլ կը յանգեցնի նշանակալից կորուստների քաղաքացիների շրջանում եւ, հաւանաբար, կը բերի տարածաշրջանում հզօր ուժերի՝ Ռուսաստանի, Ֆրանսայի եւ ԱՄՆ-ի միջամտութեանը», - ասում է ճգնաժամային խմբի կազմում:

Ինչպէս ընդգծում են խմբի փորձագէտները, ցանկացած կենսունակ կարգաւորման հիմնական սկզբունքները պարզորոշ են. «կարգավիճակ հողի դիմաց» բանաձեւի տարբերակները՝ զուգորդուած ուժեղ անվտանգութեան միջազգային երաշխիքներով, սակայն դրանք հիմնուած են փոխադարձ գիշումների վրայ, որը կողմերից ոչ մէկին էլ ձեռք չի տալիս:

«Որքան լարուածութիւնը սրուած է, այնքան միջազգային միջնորդութիւնը լճանում է: Ամե-

նահզօր օտարերկրեայ ազդեցիկ ուժը Ռուսաստանն է, թէեւ նրա դերակատարումը բարդ է: Այն եւ ՀՀ Միսկի խմբի համանախագահներից է, սակայն միևս կողմից՝ Ատրպէյճանին եւ Հայաստանի զէնքի հիմնական մատակարարն է՝ կասկած առաջացնելով, որ աւելի շատ հետաքրքրուած է տարածաշրջանում իր ազդեցութիւնը մեծացնելու, քան հակամարտութիւնը կառավարելու հարցում» - ասում է գեկոյցում:

Արցախի շուրջ պատերազմի ամպեր են կուտակուում, այսպիսով՝ արձանագրում է ICG-ն իր գեկոյցում: Ուշագրաւ ու անհերքելի փաստ է, որ մինչ դարաբաղեան գօտում լարուածութիւնն աճում է, միջազգային միջնորդութիւնը լճացման մէջ է: Արեւմուտք-Ռուսաստան, ԱՄՆ-Եւրոպա, Թուրքիա-Արեւմուտք յարաբերութիւններում անորոշութիւնների փուլ է: Հենց նման իրավիճակում Ալիեւը կարող է դիմել արկածախնդրութեան՝ յոյս ունենալով, որ Մոսկուայի ուղիղ չի աջակցի հայկական կողմին:

Այս իրավիճակն էլ «օգտակար» է Մոսկուայի համար: Ռուսաստանը շարունակում է մնալ ամենաազդեցիկ դերակատար ԼՂ կարգաւորման գործընթացում, սակայն իրականում նրան ոչ լիակատար վստահում է երեւանը, Պաքոն ու Անքարան:

Բայց առաւել խորքային, եթէ դիտարկենք, բոլորը համոզուած են մէկ բանում՝ Մոսկուայի ձգտում է պահպանել իր ազդեցութիւն տարածաշրջանում, այն է՝ կողմերի վրայ, ինչը, խոստովանենք՝ յաջողուած է:

«ՀԱՅԵԼԻ»

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
ՄՈՅԻՎԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՄԱԿՄՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԵ ԱՏԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: [massis2@earthlink.net](mailto:massis2@earthlink.net)  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

**2018-ին Ընդառաջ**

**ԱՐՄԻՆԵ ՕՅԱՆԵԱՆ**

Երէկ հանրապետութեան նախագահն աւարտեց կառավարութեան ձեւաւորումը՝ հրամանագրելով բոլոր 18 նախարարներին: Գէթ մէկ փոփոխութիւն չկատարուեց կառավարութեան կազմում՝ բոլոր նախկին նախարարները վերանշանակուեցին, անգամ նրանք, ումից, ասում էին, դժգոհ է բարձր իշխանութիւնը, եւ անգամ նրանք, ովքեր այս ընթացքում հանրային քննադատութեան էին արժանացել: Իսկ սա մի բանի մասին է խօսում՝ գլոբալ փոփոխութիւնները կամ իշխանափոխութիւնը տեղափոխուեց 2018 թուական:

Մէկ տարի անց ոչ միայն ՀՀ նախագահը կը փոխուի, այլեւ յարակից այլ պաշտօնեաներ: Կը ձեւաւորուեն բոլոր նոր կառուցները, կը վերակազմաւորուեն նախ-

կիրները, երկրում ամէն ինչ կը համապատասխանեցուի նոր Սահմանադրութեանը եւ երկրի «նոր» տէրերին:

Իհարկէ, անգամ կոյրին է տեսանելի, որ այս Սահմանադրութիւնը գրուել է, եւ բոլոր կառուցները մտածուել են՝ կոնկրետ անձանց նկատի ունենալով: Եւ Սահմանադրութեան տեքստի հրապարակումից յետոյ շատերը հասկացան, որ իշխանական բուրգում իրենց համար տեղ նախատեսուած չէ: Որոշակի ցնցերի ու պահանջների աւակայութիւնը շատերին գրկեց անգամ երազելու շանսից: Բայց շատերն էլ շարունակում են յուսալ, որ իրենց տուեալներն ու

**Չրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնեղ հոն արտայայտուող բոլոր միտքերը**

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արտախորհրդարանական Գործունեություն Անպայման կը ծառայենք. Ս. Օհանեան

Մենք պետք է միշտ գործենք յանուն գաղափարի, պիտի մնամ քաղաքականութեան մէջ: «Ազատութիւն» ռատիօկայանի եթերէն այսպիսի յայտարարութիւն ըրած է «ՕՐՕ» դաշինքի անդամ, պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանը:

«Եթէ դառնանք եւ վերլուծենք այն ճանապարհը, որ 25 տարուայ ընթացքում անցել ենք, կը տեսնենք, որ բազմաթիւ թերութիւններ են եղել: Մենք՝ գոնէ ես, ցանկացած միջոցառում իրականացնելիս, յենուել եմ դրականի վրայ, գործել եմ յանունի սկզբունքով», - նշած է Սէյրան Օհանեանը:

Ան վստահեցուցած է, որ իրենք ամէն ինչ պէտք է ընեն, որ անցեալի թոյլ տուած թերութիւնները շտկեն:

«Մեզ համար հասկանալի է, որ խորհրդարանն իր մէջ չի պարունակում մեր հասարակութեան բոլոր խաւերի տեսակէտները, շահերն արտայայտող ուժերը, դրա համար արտախորհրդարանական գործունէութիւն, իհարկէ, անհրաժեշտ է», - ըսած է «ՕՐՕ» դաշինքի անդամը:

Ան հաւաստիացուցած է, որ իր բոլոր հնարաւորութիւնները պիտի ներդնէ՝ ծառայելու ժողովուրդին, հայրենիքին, Արցախին: Անդրադառնալով «ՕՐՕ»-ի յետագայ գործունէութեան՝ Սէյրան Օհանեանը տեղեկացուցած է, որ քննարկումներ կ'ըլլան քաղաքական կուսակցութիւններու, դաշինքի եւ հասարակական կազմակերպութիւններու միջեւ:

«Գործելու ձեւաչափը, մեթոտները, սկզբունքներն ինքներս կ'որոշենք, կը յայտնենք: Տարբեր



Պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեան

կուսակցական միջոցառումներ ենք փլանաւորում: Արտախորհրդարանական գործունէութիւն կը ծառայենք անպայման, որը լինելու է Հայաստանում գործող օրինական դերոյթների շրջանակում», - պատմած է զօրավար Օհանեանը:

Ան անդրադարձած է նաեւ շրջանառուող այն խօսակցութիւններուն, թէ ինքը Հայաստանէն դուրս գացած է, իրեն աշխատանքի նշանակած են: Օհանեան հերքած է այս տեղեկութիւնները ու նշած, որ իրեն համար անընդունելի են անոնք:

«Այս ժամանակահատուածում ես Հայաստանում եմ եղել, մի քանի օրով եմ դուրս եկել Հայաստանից: Ես 38 տարի ծառայել եմ իմ հայրենիքին, յայտուել եմ անցկացրել իմ կեանքը եւ շարունակելու եմ իմ գործունէութիւնն իմ հայրենիքում: Մեթոտները, ձեւերը, սկզբունքները որոշելուց յետոյ կը ներկայացնեմ հանրութեանը», - եզրափակած է Սէյրան Օհանեան:

Որեւէ Սէկը Թող Չսպասէ, Թէ «Ելք»-ը Կրնայ Փլուզուիլ. Արամ Սարգսեան

«Վերջին ժամանակներուն քաղաքականութենէն կը խօսի միայն «Ելք» դաշինքը, մենք ենք միայն քաղաքական խնդիրներ ղնողը»: «Ազատութիւն» ռատիօկայանի «Կիրակնօրեայ վերլուծական Թամ-րագեանի հետ» հաղորդման ընթացքին նման յայտարարութիւն ըրած է «Ելք» դաշինքի պատգամաւոր Արամ Սարգսեանը:

Ան նշած է, որ իրենցմէ բացի քաղաքականութեան մասին կը խօսի նաեւ Հայաստանի Հանրապետական կուսակցութենէն 1-2 մարդ՝ Աժ փոխխօսանակ էտուարտ Շարմազանովը եւ պատգամաւոր Արփինէ Յովհաննիսեանը: Անոր համար հանրութեան հաւատքը Աժ-ի ներառեալ ընդդիմադիրներու հանդէպ, մեծ չէ:

«Մեզ վրայ դրուած պարտականութիւնը կրկնակի մեծ է: Մենք կրկնակի պիտի աշխատենք, որ հանրութեան հետաքրքրութիւնը բարձրացնենք: Պէտք է այնպէս անենք, որ կարողանանք գործող իշխանութեանը ստիպել լսել մեր տեսակէտները: Եթէ մեր տեսակէտները հանրութիւնը լսում է, իշխանութիւնը ստիպուած է լինելու լսել», - ըսած է Աժ պատգամաւորը:

Անոր խօսքով՝ ժողովուրդը կը մտածէ՝ մարդիկ եկած են խորհրդարան, «խելոք-խելոք» օրէնքներ ընդունած են, շարժարուած են, ըսած են, որ աշխատավարձը քիչ է, բայց կեանքը չէ փոխուած:

«Պատճառն այն չէ միայն, որ այդ օրէնքներն ինչ-որ մարդկանց շահեր սպասարկելու համար են եղել, եղել են շատ օրէնքներ, որոնք լաւ են: Պատճառն այն է, որ այդ օրէնքները չեն կիրառուում, չեն լսուում, չեն գործում բոլորի համար», - տեսակէտ յայտնած է



«Ելք» դաշինքի պատգամաւոր Արամ Սարգսեան

«Ելք»-ի պատգամաւորը:

Անդրադառնալով այն հարցին, թէ հնարաւոր է՞ «Ելք»-ը նոյնպէս տարակարծութիւններու պատճառով փլուզուի, պատգամաւորը պատասխանած է. «Երբ ձեւաւորուում էր «Ելք» դաշինքը, մենք հիմնականում ապագային միտուած բոլոր այդ հարցերը, տարածալուծութիւններն ամիսուկէս քննարկել ենք: Ստորագրել ենք մի փաստաթուղթ, որը բոլոր հարցերի վերջնական պատասխանն ունի»:

Արամ Սարգսեանը վստահեցուցած է, որ որեւէ մէկը թող չսպասէ, թէ «Ելք»-ը կրնայ փլուզուիլ, որովհետեւ թէ՛ Նիկոլ Փաշինեանը, թէ՛ ինքը անցած են փլուզուող դաշինքներով, տեսած են այդտեղի խնդիրները:

«Դաշինք փոխելն այնքան էլ լաւ գիծ չէ կենսագրութեան մէջ, մասնաւոր իմ տարիքում դա կրկնելն այնքան էլ լաւ բան չի լինի, դրա համար մենք ապագայի հետ կապուած ցանկացած նրբերանգ մեր մէջ ճշդել ենք», - ըսած է պատգամաւորը:

Զեկույց .- Աժ Ընտրութիւնները Չեն Համապատասխանած Ժողովրդավարական Ընտրութիւններու Չափանիշներուն

2017 թուականի Ապրիլ 2-ին կայացած Ազգային ժողովի ընտրութիւնները անցած են բազմաթիւ թերութիւններով եւ խախտումներով, ընտրողներու կամքի արտայայտման վրայ ճնշումներ գործադրուած են եւ անոնք չեն համապատասխաներ ժողովրդավարական ընտրութիւններու սկզբունքներուն եւ չափանիշներուն: Այս մասին ըստուած է Հայաստանի Հելսինքեան կոմիտէի զեկույցին մէջ, որ կը վերաբերի Ապրիլին կայացած խորհրդարանական ընտրութիւններուն:



բազմաթիւ խախտումներով, Հայաստանում կառավարման նախագահական համակարգը փոխուեց խորհրդարանականի:

2017 թ. Աժ ընտրութիւնների առանձնապատկերները կայանում էր նրանում, որ նախագահի ինստիտուտը չի ձեւաւորուելու համապետական ընտրութիւնների արդիւնքում, եւ յետագայ տարիներին պետական համակարգի ձեւաւորման մէջ առանցքային դեր ունենալու է Ազգային ժողովը:

Թէեւ ընտրութիւնների քուէարկութեան փուլը եւ ձայների հաշուարկը անցան հիմնականում թափանցիկ՝ իշխանութեան վերարտադրումը երաշխաւորուեց վարչական եւ ֆինանսական ռեսուրսների կիրառման օգնութեամբ: Բացայայտութեան բազմաթիւ վարչական եւ ֆինանսական ռեսուրսների կիրառման եւ չարաչափման փաստեր, տեղի ունեցան բռնութիւններ որոնք, սակայն, որեւէ պատշաճ իրաւական հետեւանք չունեցան»:

Տիւրք Անակնկալ Ընտրակեղծարար Տնօրէններուն Համար

«Ժողովուրդ» թերթը գրած է. «Աժ ընտրութիւններում ՀՀԿ օգտին ձայներ հաւաքագրելու սքանտալը շատ թանկ է նստել դպրոցների եւ մանկապարտեզների տնօրէնների վրայ: Ժիշդ է՝ հայաստանեան իրաւապահ համակարգն աչք փակեց այդ աղմուկի վրայ, եւ ՀՀԿ օգտին իրենց պաշտօնական դիրքն օգտագործած տնօրէններն անպատիժ մնացին, սակայն «Ժողովուրդ»-ի աղբիւրների պնդմամբ՝ նրանք խնդիր են ունենալու օտարերկրեայ պետութիւնների հետ, եթէ որոշեն դիմել համապատասխան ղեսպանատներ՝ արտերկիր մեկնելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան, որ ՀՀ-ում օտարերկրեայ մի քանի պետութիւնների ղեսպանատներ այդ սքանտալը բացայայտած «Իրագեկ քաղաքացիների միաւորում» /Կ-ից խնդրել են իրենց տրամադրել դպրոցի եւ մանկապարտեզների տնօրէնների անունների ամբողջական ցանկը: Կազմակերպութիւնն էլ, բնականաբար, տրամադրել է հետաքրքրող տեղեկութիւնը:

Թէ ինչո՞ւ են ղեսպանատներն ուզել այս տնօրէնների անունները, դժուար է ենթադրել. նրանց անունը կը յայտնուի սեւ ցուցակում, եւ այդ երկրները կարգէն ընտրակեղծարարների մուտքն իրենց երկիր՝ մերժելով վիզայի տրամադրումը:

Յիշեցնենք, որ 2015թ. սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէից յետոյ ՀՀ-ում ԱՄՆ ղեսպանատները հանդէս եկաւ յայտարարութեամբ՝ տեղեկացնելով. «Հաշուի առնելով այն հանգամանքը, որ Միացեալ Նահանգները աշխարհով մէկ պայթարում է կաշառակերութեան դէմ, Դեկտեմբերի 6-ի հանրաքուէի անաչառ անցկացմանն ուղղակիօրէն միջամտած անձանց մասին հրապարակումներում տեղ գտած տեղեկութիւնները կարող են նաեւ կիրառուել ԱՄՆ ղեսպանատան կողմից՝ ղեսպանութեան ծրագրերում ու միջոցառումներում մասնակիցների ներգրաւումը դիտարկելիս»: Հիմա, փաստօրէն, ղեսպանատները պատրաստուում են վարուել Աժ ընտրութիւնների ժամանակ «աչքի ընկածներին» հետ»:

Logo for SYRIAN ARMENIAN RELIEF FUND with text in Armenian and English, including website and contact information.

ԼՈՒՐԵՐ

Գերմանիան Պիտի Սկսի Դուրս Բերել Իր Զորախուճը Ինճիրլիքին

Գերմանիան պիտի սկսի դուրս բերել իր զորախուճը թրքական Ինճիրլիքին: «Մեզի այլ բան չի մնար ընել», - յայտարարած է արտաքին գործերու նախարար Զիկմար Կապրիշլը՝ Անգարայի մէջ թուրք գործընկերոջ հետ հանդիպումէն ետք:

Կապրիշլ Անգարա ժամանած էր՝ վերջին անգամ մը չորդորելու թուրքիոյ իշխանութիւններուն թոյլ տալ Պունտեսթակի պատգամաւորներու մուտքը ռազմական, ուր շուրջ 250 գերմանացի զինուոր տեղակայուած է: Դռնփակ բանակցութիւնները, սակայն, ըստ հուստիւնի տուած:

«Իմ թուրք գործընկերը բացատրեց, որ այս իրավիճակին մէջ թուրքիան չի կրնար արտօնել գերմանացի օրէնսդիրներու մուտքը Ինճիրլիք՝ ներքաղաքական պատճառներով: Կը ցաւիմ անոր համար: Միւս կողմէ, ես ալ ինդիքի ըմբռնումով մօտենալ այն փաստին, որ նոյն այդ՝ ներքին հարցերու պատճառով Գերմանիան ալ պէտք է դուրս բերել իր զինուորները Ինճիրլիքէն: Գերմանիոյ մէջ բանակը խորհրդարանին կ'ենթարկուի եւ Պունտեսթակը յստակ կը պահանջէ, որ պատգամաւորները կարենան տեսակցիլ զինուորներուն հետ, որեւէ ժամանակ», - ըսած է Զիկմար Կապրիշլը:

Կապրիշլը նշած է, որ Պերլին վերադառնալուն պէս կառավարութեան ու խորհրդարանին պիտի ներկայացնէ այս այցի արդիւնքները, որմէ ետք արդէն պիտի սկսի զինուորներու դուրսբերումը: «Մենք կ'ողջինք, որ այս գործընթացը խաղաղ անցնի», - հրատարակած առաջ յայտարարած է Գերմանիոյ արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն, օգտագործելով ղեկանազիտական լեզուն, հաւաստիացուց՝ Անգարան



Գերմանոյ արտաքին գործերու նախարար Զիկմար Կապրիշլ

որեւէ խնդիր չունի Գերմանիոյ հետ, որ իր ամենամեծ առեւտրային գործընկերն է, սակայն կան հարցեր, որոնք չեն կրնար անտեսուիլ: Չաւուշօղլուն չխաբուց՝ Անգարային ամենաշատ զայրացուցած է էրտողանի աւելի քան 400 ընդդիմախօսներուն ապաստան տալու՝ Գերմանիոյ իշխանութիւններու որոշումը:

«Մենք չէինք ուզեր տեսնել՝ ինչպէս բարեկամական երկիր Գերմանիան ապաստան կու տայ հարիւրաւոր կիւլինականներու ու անցած տարուայ յեղափոխութեան փորձը կազմակերպելու մէջ կասկածուող զինուորականներուն: Անոնք, որոնց ապաստան յայցած են, որպէսզի խուսափին թրքական արդարադատութենէն, պէտք է արտայայտուին», - յայտարարած է թուրքիոյ արտաքին գործոց նախարարը, ընդգծելով՝ «Եթէ Գերմանիան մէկ քայլ առաջ ընէ դէպի մեզի, մենք երկուքը կ'ընենք»:

Գերմանական զորախուճը Ինճիրլիքին դուրս բերելու՝ Զիկմար Կապրիշլի յայտարարութենէն ետք թուրքիոյ վարչապետը չեղարկած է անոր հետ նախատեսուած հանդիպումը:

Ղարաբաղի Մէջ Զամաճայն Չեն

Շարունակուած էջ 1-էն

«Չնայած պատերազմը միշտ կարող է լինել, հաւանականութիւնը քիչ է, որովհետեւ որպէսզի, օրինակ, սկսուի ապրիլեան քառօրեայ պատերազմը, Ատրպէյճանը պատրաստուել է 22 տարի, այն էլ՝ պատրաստուել է բլից-կոլիզի (կարծածամկէտ եւ նպատակային պատերազմ): Հիմա մէկ տարի է անցել. այդ քան կորուստներէրից յետոյ, նամանաւանդ՝ միջազգային հանրութեան յստակ դիրքորոշման ներքոյ, չի կարող հնարաւոր լինել եւս մէկ պատերազմ՝ հիմա», - մեկնաբանած է Բաբայեանը:

Բաբայեանը շեշտած է, որ ICG-ն 2016 թուականի ապրիլեան պատերազմը չէր կանխատեսած:

«Այն չի արտացոլում իրականութիւնը: Օրինակ՝ նշուած չէ ինչն է եղել ապրիլեան պատերազմի պատճառը, նշուած չէ Ատրպէյճանի աւերիչ քաղաքականութիւնը, նշուած չէ վերջին յայտարարութիւնը համախառնահամարներու, որոնք մեղադրել են Ատրպէյճանին», - շեշտած է Լեւոնային Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալը:

Միջազգային կազմակերպութեան փորձագէտները իրենց գեկոյցը պատրաստելու ժամանակ գրուցած են նաեւ Տարածաշրջանի զրուցած են նաեւ Տարածաշրջանի

նային հետազոտութիւններու կեդրոնի ղեկավար Ռիչըրտ Կիրակոսեանի հետ: Վերջինս «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է, որ նոր պատերազմը իր կարծիքով, աւելի քան հնարաւոր է:

«Ապրիլեան յարձակումը հանրութեան ուշադրութիւնը շատ արդիւնաւէտ շեղեց Ատրպէյճանի ներքին ինդիքներէրից եւ յատկապէս Ատրպէյճանի իշխանութիւնների համար, բազմաթիւ տեսանկիւններէրից, շատ գալթակղիչ է կրկին փորձել դա անել», - նշած է ան:

Վերլուծելով իրավիճակը՝ Կիրակոսեան կարծիք յայտնած է, որ քանի մը ամիսէն Ատրպէյճանի համար պատերազմը սկսելու ամենապատասաւոր ժամանակը կ'ըլլայ:

«Ակնյայտ է, որ Ատրպէյճանի հաշուարկն էր՝ սպասել Հայաստանում խորհրդարանական ընտրութիւնների աւարտին, ինչից յետոյ իրենք Պաքուում անցկացնում են իսլամական օլիմփիական խաղերը, Ֆորմուլա 1-ի մրցաշարը», - նշած է փորձագէտը՝ եզրակացնելով. - «Սա նշանակում է, որ փոթեցիտալ յարձակումը յառաջիկայ շաբաթներին ու ամիսներին հաւանական է, սակայն ամրան վերջին եւ աշնանը շատ իրական վտանգ կայ»:

Տարածաշրջանային հետազոտութիւններու կեդրոնի ղեկավար

Լեւոն Մնացականեան. «Պաշտպանութեան Բանակը Թելադրողի Դերի Մէջ Է

Լեւոնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակը առաջնագիծին հանդէս կու գայ իրադրութեան թելադրողի դերով եւ պատրաստ է այսուհետ եւս պատուով կատարել իր առջեւ դրուած մարտական խնդիրը: Այդ մասին յայտարարած է Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարար, Պաշտպանութեան բանակի հրամանատար Լեւոն Մնացականեանը հայաստանեան լրատուամիջոցներու ներկայացուցիչներու հետ հանդիպման ժամանակ:

ԼՂ պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութեան հաղորդագրութեան համաձայն՝ Մնացականեանը ներկայացուցած է «առաջնագիծում տիրող իրադրութիւնը, բանակում կատարուած եւ դեռեւս ընթացքի մէջ գտնուող գործընթացների համալիրը, անդրադարձել հակառակորդի սադրիչ գործողութիւններին արցախեան զինուժի պատասխան գործողութիւնների առանձնայատ-



Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարար Լեւոն Մնացականեան

կութիւններին»: Հայաստանի շուրջ չորս տասնեակ լրագրողներ 2-4 յունիսին Լեւոնային Ղարաբաղ էին, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան կողմէ կազմակերպուած ռազմական լրագրութեան դասընթացներու ծիրէն ներս:

ԱՄՆ Գոնկրէսականները Ուաշինկթընէն Պահանջած Են Պատժել Էրտողանի Թիկնազօրի Բռնարարքները

ԱՄՆ Գոնկրէսի ներկայացուցիչներու պալատի անդամները պաշտօնական Ուաշինկթընին կոչ ըրած են խստօրէն պատժել մօտ երեք շաբաթ առաջ Ուաշինկթընի մէջ թուրքիոյ դեսպանի նստավայրի առջեւ տեղի ունեցած միջադէպի մեղաւորները եւ այնպիսի քայլեր ձեռնարկել, որոնք կը բացառեն նմանատիպ դէպքերու կրկնութիւնը:

Խստօրէն դատապարտելով Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած այդ միջադէպը, ներկայացուցիչներու պալատի օրակարգին մէջ ընդգրկուած է բանաձեւ, որու հեղինակները նաեւ կը յիշեցնեն, որ ընդհարումէն անմիջապէս ետք Ուաշինկթընի ոստիկանութիւնը ձերբակալած, ապա ազատ արձակած էր թուրքիոյ նախագահի թիկնապահներէն երկուքը, քանի որ անոնց վրայ եւս կը տարածուի անձեռնմխելիութեան այն իրաւունքը, որով օժտուած են ԱՄՆ այցելող օտար պետութիւններու ղեկավարները:

«Պետական քարտուղարութիւնը էրտողանի անվտանգութեան ծառայութեան այդ աշխատակիցներու ազատ արձակումէն առաջ չէ պահանջած թուրքիոյ իշխանութիւններէն, որպէսզի այդ մարդիկ, հետաքննութեան շահերէ ելլելով, զրկուին անձեռնմխելիութենէն», - նշած են ամերիկացի գոնկրէսականները, նաեւ ընդգծելով՝ ամերիկեան իշխանութիւնները թոյլ տուած են, որ միջադէպի այդ երկու մասնակիցները առանց որեւէ խոչընդոտի լքեն Միացեալ Նահանգներու տարածքը:

Յատուկ նշելով, որ թիկնազօրի նման պահուածքը որեւէ բանով արդարացուած չէր, քանի որ «էրտողանին վտանգ չէր սպառնար»՝ ամերիկացի օրէնսդիրները նաեւ յիշեցնեցին, որ Ռեճեպ Թայիպ Էրտողանի թիկնապահներու մասնակցութեամբ Մայիսի 16-ին տեղի ունեցած ընդհարումը թիւով եր-



բորդ նման միջադէպն էր Միացեալ Նահանգներու տարածքին:

Իրենց դժգոհութիւնը յայտնելով թուրքիոյ նախագահի թիկնազօրի պահուածքի առթիւ՝ բանաձեւի հեղինակները կը պահանջեն «ԱՄՆ-ը պէտք է մեղադրանք առաջադրէ եւ պատասխանատուութեան ենթարկէ թուրքիոյ անվտանգութեան ծառայութեան բոլոր այն աշխատակիցներուն, որոնք ուղղորդած, վերահսկած կամ մասնակցած են Մայիս 16-ի ցոյցը ցրելուն ուղղուած անօրինական գործողութիւններուն»:

«Այն հարգանքը, որ Միացեալ Նահանգները կը տածէ ազատ խօսքի հանդէպ, կը պահանջէ, որ ամերիկացի պաշտօնեաները յստակ կերպով արտայայտուին այս միջադէպերուն դէմ, ինչպէս նաեւ քայլեր ձեռնարկեն թուրքիոյ նման պետութիւններուն մէջ մամուլ եւ քաղաքացիական ազատութիւնները ամրապնդելու համար: ԱՄՆ-ը պէտք է պայքարի նաեւ օտարերկրեայ պետութիւններու ղեկավարներու՝ իրենց երկիրներուն մէջ խաղաղ եւ ազատ բողոքի ցոյցերը ճնշելուն ուղղուած գործողութիւններուն դէմ», - նաեւ նշուած է ամերիկացի գոնկրէսականներու մշակած բանաձեւին մէջ:

բի կարծիքով, այս գեկոյցը չկրցաւ ցոյց տալ, որ իրականութեան մէջ Հայաստանը իր հարեւաններու հա-

մար վտանգ չի ներկայացներ եւ նոր պատերազմի վտանգը կու գայ Ատրպէյճանէն:

### ՄԴՅԿ-ի Պատուիրակութեան Հանդիպումը Լիբանանի Նախագահ Միշել Աունի Հետ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին պետական երեսփոխան Պրն. Սեպուհ Գալփաքեան եւ ՄԴՅԿ-ի Լիբանանի շրջանի վարչի մարմնի ատենապետ Տոքթ. Մարտիկ Ժամկոչեան, Հինգշաբթի Յունիս 1-ին այցելած են Պաապտայի պալատ, ուր տեսակցութիւն ունեցած նախագահ Միշէլ Աունի հետ:

Զրուցակիցները արծարծած են երկրի ընդհանուր կացութիւնը եւ հրատապ թղթածրարները: Անոնք քննարկած են նախագահի պաշտօնավարութեան առաջին 6 ամիսներուն ընթացքին կատարուած նշանակումները եւ բարե-

կարգումներու ուղղութեամբ տարուած աշխատանքները, որոնք կը միտին վերակազմակերպել պետական հաստատութիւնները եւ աւելի արդիւնաւէտ դարձնել անոնց աշխատանքը:

Քննարկումի գլխաւոր նիւթ եղած է ընտրական նոր օրէնքի թղթածրարը, մանաւանդ վերջին շրջանի լաւատեսութիւնը եւ քաղաքական խորհրդակցութիւններուն ընթացքին շրջանառուած տարբերակները:

Յիշեցնենք, որ Լիբանանեան խորհրդարանի անդամ Պրն. Սեպուհ Գալփաքեան կը վարէ ՄԴՅԿ Կեդրոնական վարչութեան փոխատենապետի պաշտօնը:

### Ֆրանսայի Նոր Նախագահի Օրօք Հայաստանի Հետ Յարաբերութիւնները Աւելի կը Խորանան. Դեսպան

Ֆրանսայի նախագահական ընտրութիւնները բաց էին մամուլի համար եւ լայնօրէն կը լուսաբանուէին: Այս մասին 1 Յունիսին մամուլի ասուլիսի ժամանակ ըսած է Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանթեէն:

Ֆրանսայի քաղաքացիները կատարեցին իրենց ընտրութիւնը՝ ընտրելով բարեփոխումներու եւ «Ֆրանսան ԵՄ կազմին» մօտեցման կողմնակից էմանուէլ Մաքրոնին: Քաղաքական դաշտի ձեւաւորումը դեռ է աւարտած: Ընտրուած է նախագահը եւ ձեւաւորուած է կառավարութիւնը, սակայն խորհրդարանական ընտրութիւն-

ները դեռ տեղի չեն ունեցած: Դեսպանը աւելցուցած է, որ քաղաքական դաշտի վերջնական պատկերը պարզ պիտի դառնայ 18 Յունիսին:

Անոր խօսքով՝ Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան մէջ պէտք է զգալի փոփոխութիւններ սպասել, քանի որ այն կը ձեւաւորուի քաղաքական հիման վրայ: «Հայաստանի եւ Ֆրանսայի յարաբերութիւնները հին ու խոր են: Նպատակն է՝ արդիականացնել այդ յարաբերութիւնները եւ աւելի շարժական դարձնել», - ըսած է դեսպանը:

Նշենք, որ հանդիպման սկիզբը դեսպանը հայերէն խօսած է:

### Ուրուկուէի Մէջ Իր Մահկանացուն Կնքած Է Տիկին Արաքսի Ռուբէնեան

Խոր ցաւով տեղեկացանք Ուրուկուահայ գաղութի կարկառուն դէմքերէ՝ բարերար Տիկին Արաքսի Ռուբէնեանի մահը: Տիկին Արաքսի, իր ամուսնոյն՝ ողբ. ընկ. Յարութիւն Ռուբէնեանի հետ միասին տասնամեակներ շարունակ պահեցին Ռատիոյ Արմենիան՝ հայ երաժշտութիւնը ու մշակոյթը տարածելով ու վառ պահելով Հարաւային Ամերիկայի հայութեան մօտ: Տիկ. Ռուբէնեան մեծ օգտակարութիւն ունեցած է համայնքի տարբեր կազմակերպութիւններուն: Մոնթեվիտոյի «Հնչակեան Ակումբի» գրադարանը կոչուած է իր անունով՝ առ ի երախտագիտութիւն անոր մատուցած ծառայութիւններուն: Ան նաեւ ղեկավարած է «Արմենիա» հրապարակի յանձնախումբը: Տիկին Արաքսի Ռուբէնեանի մահը մեծ կորուստ է ոչ միայն Ուրուկուահայութեան, այլ նաեւ սփիւռքահայութեան համար, որուն լաւագոյն ներկայացուցիչները մէկ առ մէկ կը հեռանան մեզմէ՝ իրենց ետին ձգելով մեծ բաց: Այս տխուր առթիւ, մեր ամբողջ շրջանակի անունով կը յայտնենք մեր խորին ցաւակցութիւնները՝ հանգուցեալի զաւակին, ընտանեկան բոլոր պարագաներուն եւ համայն Ուրուկուահայութեան: ՄԴՅԿ Կեդրոնական վարչութիւն Մայիս 31, 2017

### Գերմանիան Դեմ է 2018-ին ՆԱԹՕ-ի Գագաթնաժողովը Թուրքիոյ Մէջ Իրականացնելուն



ՆԱԹՕ-ի անդամ քանի մը երկիրներ՝ Գերմանիոյ, Ֆրանսայի, Հոլանտայի եւ Դանիոյ գլխաւորութեամբ, կտրականապէս դէմ արտայայտուած են 2018 թուականին դաշինքի գագաթնաժողովը Թուրքիոյ մէջ իրականացնելուն: «ԹԱՍՍ»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդած է «Die Welt»-ը: Պարբերականը կը յիշեցնէ, որ 2016 թուականի յուլիսին վարչապետ մէջ ՆԱԹՕ-ի գագաթնաժողովին Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփի էրտողան առաջարկած է յաջորդ երկու տարիներուն 28 անդամ-պետութիւններու հանդիպումները Պոլսոյ մէջ իրականացնել: Հակառակ որ այդ հարցի շուրջ պաշտօնական որոշում չէ կայացուած, ենթադրուած է, թէ հրաւերը ընդունուած է: Սակայն

այժմ, ըստ «Die Welt»-ի, ամէն ինչ կտրուկ պիտի փոխուի: «Մենք չենք ուզեր, որ տպաւորութիւն ստեղծուի, թէ ՆԱԹՕ-ն կը սատարէ թրքական կառավարութեան ներքին քաղաքականութիւնը», - պարբերականը մէջբերած է իրադրութեան ծանօթ պաշտօնակի խօսքը: Նշուած երկիրները յաջորդ տարի Պրիւքսէլի մէջ հանդիպում պիտի կազմակերպեն. Պրիւքսէլի գագաթնաժողովը իր տարածքին մէջ իրականացնելու պատրաստակամութիւն չայտնած է: Պարբերականը աւելցուցած է, որ հարցի շուրջ պաշտօնական որոշումը, ամենայն հաւանականութեամբ, յայտնի պիտի դառնայ յունիսին՝ ՆԱԹՕ-ի անդամ երկիրներու պաշտպանութեան նախարարներու հանդիպման ժամանակ:

### Սերժ Սարգսեան Հերքեց

Շարունակուած էջ 1-էն մտացածին են: Մենք շատ լաւ հասկանում ենք ե՛ւ կուսակցութեան, ե՛ւ իշխանութեան մակարդակում, թէ ովքեր են այդ բեմադրութեան հեղինակները, ինչպիսին են նրանց ցանկութիւնները: Բայց կարծում եմ, որ դա իրավիճակի վրայ որեւէ ազդեցութիւն ունենալ չի կարող», - ըսած Սարգսեան: Նախագահը նշած է, թէ երկրի մէջ, մասնաւորապէս, Հայաստանի Հանրապետական կուսակցութեան մէջ առողջ աշխատանքային մթնոլորտ է: Միւս կողմէ սակայն, քաղաքական շրջանակներ կը պնդեն, որ Հանրապետական կուսակցութեան տարբեր խմբաւորումներուն միջեւ պայքար սկսած է 2018-ի Ապրիլին յետոյ վարչապետի թեկնածութեան ընտրութեան շուրջ, եւ այդ պայքարը յառաջիկային աւելի պիտի սրի: Կովկասի ինստիտուտի ղեկավար, քաղաքագէտ Ալեքսանդր Իսկանդարեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է որ, իշխող խումբէն ներս խնդիրներ կան, որովհետեւ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններէն յետոյ, մրցոյթ չայտարարուած է, թէ ով պիտի դառնայ երկրի առաջին դէմքը՝ վարչապետը 2018 Ապրիլին յետոյ, երբ անցում պիտի կատարուի խորհրդարանական կառավարման: «Չափազանց տարօրինակ կը լինէր, եթէ այդ հարցի առնչութեամբ հակա-

ստութիւններ չառաջանային տարբեր խաղացողների միջեւ: Բենականաբար, այդ հակասութիւններն առկայ են, բնականաբար, կան տարբեր թեկնածուներ՝ մարդիկ, ովքեր իրենց տեսնում են այդ պաշտօնում», - ըսած է Իսկանդարեան: Քաղաքական մեկնաբան Յակոբ Բաղալեանի կարծիքով, Հայաստանի սոցիալ-տնտեսական իրաւիճակը մեծապէս ծանրացած է եւ գործող իշխանութիւնը ի վիճակի չէ միջոցներ գտնել զայն շտկելու համար: «Վարչապետի խումբը ունի ռեսուրսներ, սակայն, չի պատրաստուում դրանք ներդնել՝ չունենալով իրական իշխանութիւն: Պաշարի պատճառն էլ հենց դա է, որովհետեւ գործող էլիտաները չեն ցանկանում զիջել իշխանութիւնը կարապետեաններին», - ըսած է մեկնաբանը: «Այստեղ նոյնիսկ անձերը չեն կարելու: Միայն Սերժ Սարգսեան-Կարէն Կարապետեան խնդիրը չէ այստեղ: Ներքինական ողջ պալիտրայում առկայ են տարբեր շահեր ներկայացնող խմբեր, տարբեր ֆինանսական հնարաւորութիւններ, եւ խնդիրն առաջացել է այս ամէնի ֆոնին: Իրավիճակն այնքան ծանր է, որ ինչ-որ մէկը պէտք է բարձր գին վճարի՝ այն փոխելու համար: Բայց ոչ ոք չի ուզում վճարել այդ գինը՝ չունենալով յստակ երաշխիք կոնկրետ իշխանութեան տեսքով», եզրակացուցած է Բաղալեան:

### Խաղաղութեան Դասակի 42 Նոր Կամաւորները Պիտի Դասաւանդեն Հայաստանեան Դպրոցներու Եւ Համալսարաններու մէջ



Ուրբաթ, Յունիս 2-ին, Երեւանի մէջ տեղի ունեցած է Խաղաղութեան դասակի 42 նոր կամաւորներու երդման արարողութիւն: ԱՄՆ-էն Հայաստան ժամանած խումբ մը երիտասարդներ որպէս կամաւորներ պիտի աշխատին տեղի դպրոցներուն, համալսարաններուն եւ հասարակական կազմակերպութիւններուն մէջ: Անոնք պիտի դասաւանդեն անգլերէն, Համայնքի եւ երիտասարդութեան ծրագիրներուն մէջ պիտի ընդգրկուին որպէս կամաւորներ:

Բոլոր երիտասարդները ԱՄՆ քաղաքացի են, բայց անոնցմէ շատերը արդէն հայերէնով ազատ կրնան հաղորդակցիլ՝ շնորհիւ խտացած դասընթացներուն, որոնք անցած են Հայաստանի մէջ:

Tert.am-ի հետ գրոյցի ժամանակ կամաւորներէն Տատի Մորէնտն խոստովանած է, որ հայերէնը բաւական բարդ լեզու է, բայց, քանի որ ինքը հայ ընտանիքի հետ կ'ապրի, անոնց հետ բացառապէս հայերէնով կը շփուի, հեշտութեամբ կը սորվի հայերէնը: Տատին ըսած է, որ ինքը Քարակերտի դպրոցէն ներս անգլերէն կը դասաւանդէ եւ ընթացքին հասցուցած է ծանօթանալ ու սիրել հայկական մշակոյթը:

«Երկու տարի է՝ Հայաստան եմ, Սեպտեմբերին կ'աւարտեմ: Ես շատ սիրեցի իմ ընտանիքը, Հայաստանը: Հայերէնը, այո, դժուար է, բայց իմ ընտանիքը այլ լեզու չի գիտեր, ուստի միայն հայերէնով կը շփուինք: Իմ համար հաճելի էր, որ հայկական ընտանիքները մտերիմ են, ես շատ սիրեցի հայկական ուտելիքները, պարերը: Տոյմա կը սիրեմ: Անցած տարի, երբ քանի մը

օրով ԱՄՆ գացի, ես այնտեղ տոյմա պատրաստեցի», - նշած է Տատի Մորէնտն:

Կամաւորներէն Քէյթ Քեյսին ալ խոստովանած է, որ մեծ ջանքեր կը գործադրէ հայերէն սորվելու համար: Ան ըսած է, որ Թէքսասէն Սիւսիան տեղափոխուելու, ուր ինք կը բնակի ու կ'աշխատէի ՀԿ-ի մէջ որպէս արտաքին կապերու պատասխանատու, իր համար դժուար չէր:

Քէյթը նշած է, որ 1 տարի է, որ Հայաստան է եւ յոյսով է, որ կը կարենայ շարունակել ապրիլ այստեղ, քանի որ Սիւսիանը շատ սիրած էր:

Ի դէպ՝ կամաւորներու երդման հանդիսաւոր արարողութիւնը համընկած էր Հայաստանի մէջ Խաղաղութեան դասակի գործունէութեան 25-րդ տարեդարձի հետ: Խաղաղութեան դասակի առաջին կամաւորները Հայաստան ժամանած են 1992-ին: Խորհրդանշական էր, որ երէկ երդում տուաւ 1000-րդ կամաւորը, որ պիտի աշխատի Հայաստանի մէջ:

Ինչպէս լրագրողներու հետ գրոյցի ժամանակ ըսած է Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Ռիչըրտ Միլըրը, այս օրը յիշարժան է բոլորին համար:

«Խաղաղութեան դասակի ծրագիրով Հայաստան ժամանած են տարբեր տարիքի կամաւորներ, որոնք կը ծանօթանան ՀՀ կեանքին, մշակոյթին, առանձնապատկութիւններուն եւ, ԱՄՆ վերադառնալով, անոնք կը ձեւաւորեն շրջանակ մը, որ հասանելի կեանք յարաբերութիւններու գարգացման դիրքերէ հանդէս կու գայ», - ըսած է Ռ. Միլըրը:

### Ազնաւոր Հիմնադրամին Պաշտօնապէս Փոխանցուած է Երգիչին Տուն-Թանգարանը



Երեւանի մէջ հիմնուող Շառլ Ազնաւորի տուն-թանգարանը պիտի ըլլայ աշխարհի մէջ առաջինը, ուր Ազնաւոր անձամբ պիտի պատմէ իր կեանքի մասին. լսողական վարիչի համար պատրաստուած գրութիւնն ու ձայնագրութիւնը Շառլ Ազնաւորի կողմէ եղած է: Գասգաստի մէջ՝ Շառլ Ազնաւորի կացարանին մօտ, այս յայտարարութիւնը ըրած է «Ազնաւոր» հիմնադրամի տնօրէն Քրիսթինա Սարգիսեանը:

«Յայտնուելով թանգարանում՝ Գոլք կարող էք նրանից լսել նրա կեանքի պատմութիւնը, տեսնել տեսանիւթեր եւ անգամ նրա համերգը 3D ձեւաչափով», - նշած է ան, աւելցնելով, որ Շառլ Ազնաւորի թանգարանը պիտի ըլլայ առաջին արդիական թանգարանը Հայաստանի մէջ, ուր պիտի կազմակերպուին նաեւ մշակութային միջոցառումներ:

Յիշեցնենք, որ այսօր աշխարհահռչակ մեկնաբան Շառլ Ազնաւորը որդիի՝ Նիքոլա Ազնաւորի հետ, յայտարարած է «Ազնաւոր» հիմնադրամի ստեղծման մասին, որու նպատակն է մասնաթրոյցի ստեղծած ժառանգութեան պահպանութիւնն ու հանրայնացումը, ինչպէս նաեւ՝ կրթական, մշակութային եւ ընկերային ծրագիրներու մշակումն ու իրականացումը:

Երգիչի՝ Գասգաստի հարեւանութեամբ գտնուող կեցավայրին մէջ, տեղի ունեցած է հանդիսաւոր արարողութիւն, որու ժամանակ պետութեան կողմէ «Ազնաւոր» հիմնադրամին պաշտօնապէս փոխանցուած են Ազնաւորի կեցավայր-թանգարանի բանալիները:

«Ազնաւոր» հիմնադրամի տնօրէն Քրիսթինա Սարգիսեանը

նշած է՝ թանգարանը բանալու նպատակն է աշխարհի բոլոր հայերու համար շատ կարեւոր մարդու՝ Շառլ Ազնաւորի կեանքը ներկայացնելը, ցոյց տալ, թէ ինչպէս ան յաջողութեան հասած է: «Ներկայացուելու է, թէ ինչպէս հինգ հոգանոց ընտանիքում՝ 20 քառակուսի մեթր տարածքում ապրող Ազնաւորը յաջողութեան հասաւ, որպէսզի նրա կերպարը ստիպի եւ օգնի մարդկանց, որ երազեն եւ մեծ նպատակներ ունենան: Շառլ Ազնաւորի կեանքը շատ իւրաքանչեւ է, եւ թւում է, թէ անիրականանալի է, ինչպէս հեքիաթը: Բայց այն իրական է՝ աշխատանքի, քրտինքի շնորհիւ: Այսօր էլ Շառլ Ազնաւորն աշխատում է այնպէս, ինչպէս ոչ ոք», - ըսած է ան:

Պատասխանելով հարցին, թէ ինչու որոշուած է Ազնաւորի թանգարանը Երեւանի մէջ բանալ՝ Քրիսթինա Սարգիսեանը նշած է, որ աշխարհահռչակ մշտապէս ապացուցած է իր հաւատարմութիւնը իր ազգի նկատմամբ եւ դեռ 1988 թուականի երկրաշարժէն ետք բազմաթիւ նախագիծեր իրականացուցած է Հայաստանին օգնելու համար:

Քրիսթինա Սարգիսեանի խօսքով՝ թանգարանի բացումը իրենք կը նախատեսեն 2018 թուականին, աւելի ստոյգ բացման ժամանակահատուածը չէ կրցած նշել, քանի որ, ըստ անոր, այնտեղ այնպիսի թեքնոլոգիաներ պիտի օգտագործուին, որոնք Հայաստանի մէջ նորութիւն կը համարուին:

Ան շատկանշական համարած է այն, որ պետութիւնը որոշած է երգիչի կեցավայրը տրամադրել

Շար.ը էջ 19

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Մայիս 5-ին, 2017 Առաջնորդարանի մէջ գումարուած Թեմական Պատգամաւորական 90-րդ Տարեկան Ժողովի ընթացքին կատարուեցան Թեմական Խորհուրդի անդամներուն մասնակի ընտրութիւնը: Պատգամաւորական Ժողովի աւարտին, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէր-տէրեանի Նախագահութեամբ, Թեմական Խորհուրդի նոր կազմը կարճ ժողով մը ունեցաւ, որու ընթացքին կատարուեցան պաշտօններու ընտրութիւնը ըստ հետեւեալի.-

Ատենապետ՝ Իրաւաբան Ժողով Կանխմեան (Պրոպէնքի Սրբոց Ղեկնարկեանց Մայր Տաճարէն):

Փոխ Ատենապետ՝ Գատաւոր Էտրիք Գրիգորեան (Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցին):

Գանձապահ՝ Եուրի Ակոբեան (Սիմօնի Սուրբ Յարութիւն Հայց. Եկեղեցին):

Ատենադպրուհի՝ Սանտրա Գազանճեան Կոստանեան (Ֆրէզնոյի Սուրբ Պողոս Հայց. Եկեղեցին):

Հոգեւորականներ  
Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեան, Հոգեւոր Հովիւ Քրէստնիստ Հովիտի Սրբոց Առաքելոց Հայց. Եկեղեցւոյ:

Հոգ. Տ. Բագրատ Մ. Վրդ.

Պերճէքեան, Հոգեւոր Հովիւ Սան Տիկէոյի Սուրբ Յովնանու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ:

Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ Հալիվուտի Սուրբ Յովնանու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ:

Արժ. Տ. Խաթակ Քհնյ. Շահապազեան, Հոգեւոր Հովիւ Առաջնորդանիստ Սրբոց Ղեկնարկեանց Մայր Տաճարի:

Արժ. Տ. Սերովբէ Քհնյ. Էյլէնճեան, Հոգեւոր Հովիւ Սանթա Գլարիթայի Սուրբ Մարգարէ Հայց. Եկեղեցւոյ:

Աշխարհականներ  
Տիար Պարգեւ Համալեան, (Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցին):

Տիար Տէրիք Ղուկասեան, (Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցին):

Դոկտ. Քրիս Միրզայան, Գոթթա Մեայի Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցին:

Տիար Կրէկ Զրգոյեան, Օպլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցին: (Տիար Մհեր Շարեան, )Փորթլընտի Սուրբ Գէորգ Հայց. Եկեղեցին:

Բրշ. Պերճ Սրկ. Մանուկեան, Արիզոնայի Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցին:

### ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԵՐԿՈՒ ԹԱՏԵՐԱԽԱՂ



Հայ Թատրոնի Ընկերութիւնը բեմադրելու է երկու շատ հետաքրքիր թատերախաղ, մեքսիքացի նկարչուհի Ֆրիդա Քաչլոյի եւ հայ մեծ երգահան եւ երժշտագէտ Կոմիտասի մասին:

Օրը դեռ շարունակուած է - Ֆրիդա Քաչլոյի մասին - հեղինակ՝ Կարինէ Խոբիկեան - Աշխարհում առաջին ներկայացումը այս նոր թատերախաղի

Երգ մահու եւ անմահութեան - Կոմիտասի մասին - հեղինակ՝ Գուրգէն Մահարի

Ներկայացումները տեղի կ'ունենան՝ Ուրբաթ Յունիսի 9-ին, ժամը 8-ին, Շաբաթ Յունիսի 10-ին ժամը 8-ին, եւ Կիրակի Յունիսի 11-ին ժամը 5 -ին

Կիրակի օրը, ներկայացում մից յետոյ (ժամը 7-ից յետոյ) կը լինի նաեւ հանդիպում եւ հիւրասիրութիւն, առիթ տալով հետաքրքրողներին ունենալ մտքերի եւ տեղեկութիւնների փոխանակում թատերախաղերի եւ նրանց առարկայ արուեստագէտների մասին:

Դերերում՝  
ՕՐԸ ԴԵՈ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ

է - Մերի Համբարձումեան, Լիւզմիլա Գրիգորեան եւ Արամազդ Ստեփանեան:

ԵՐԳ ՄԱՀՈՒ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ - Մասիս Եղգարեան, Այդա Սիմոնեան, Արիս Բաղումեան, Զարեհ Յովհաննիսեան, Մարո Խողովերդի, Նորայր Այվազեան եւ Վահէ Ասլանեան:

Երգիչներ՝ Մառիթա Աբրահամեան եւ Ալին Մատրեան

Երաժիշտներ՝ Ալբերտ Հայրապետեան եւ Ռաբի Մաքթոնալդ:

Բեմահարգարներ՝ Աւետ Ստեփանոսեան եւ Հիլարի Բառնման (մեքսիքական նկարչութիւն):

Տարազների ձեւում եւ պատրաստում՝ Ռուբինա Օհանեան

Լուսաւորում՝ Քերի Դան

Բեմաշխատողներ՝ Ռանդոլֆ Էգալբար, Նորվարդ Աւանեսեան, Խաթակ Ստեփանեան եւ Զորի Բարդին:

Բեմադրիչ՝ Արամազդ Ստեփանյան

Տոմսերու համար դիմել՝  
www.itsmyseat.com կամ Ապրիլ Գրասնից [415 E. Broadway, Glendale, CA 91205 (818) 243-4112]

### Ամերիկահայ Կազմակերպութիւններու Հանդիպումը

Շարունակուած էջ 1-էն

նիսեան: Ան մանրամասնօրէն անդրադարձաւ անցնող մէկ տարուան ընթացքին դեսպանատան վարած գործունէութեան մասին, որոնք կ'ընդգրկէին տարբեր բնագաւառներ՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորումը, դիմումներ եւ նամակներ նախագահներ Օպամային եւ Թրամփին Յեղափոխութեան ճանաչման մասին, միջուկային գէնքի արգելում, հանդիպումներ ԱՄՆ-ի Գոնկրէսի անդամներուն հետ, ամերիկեան ներդրումները Հայաստանի մէջ, ինչպէս նաեւ երկրէ երկիր տեղափոխուող յանցագործներու դէմ միջոցառումներ, դիմորդական կրթութիւն եւ խաղաղութեան համար պայքար:



Լոս Անձելեսի հայութիւնը շատ լաւ կը յիշէ մեր քաղաքի մէջ նախընթացը չունեցող Արմէն Տիգրանեանի «Դաւիթ Բէկ»-ի օբերան, որ հրաշքի համագորգործ մըն էր: Մէկ անձի մը նախաձեռնութեամբ եւ ղեկավարութեամբ եղած այդ գործը իրապէս գնահատանքի արժանի գործ մըն է: Այդ օբերան ներկայացուցաւ Նիւ Եորքի, Պոստոնի, Շիքալոյի, Սան Ֆրանսիսքոյի եւ Ֆրեզնոյի մէջ արժանանալով ժողովուրդին որոտընդոտ եւ խելացի ծափահարութեան: Այս օբերային իրենց մասնակցութիւնը բերին Ակապալա երգչախումբը, Լոս Անձելեսի ամէնէն փայլուն մենակատարներ, որոնց ղեկավարման գործը, գործիքաւորումը ամբողջութեամբ Հենրիկ Անասեանի ղեկավարութեամբ եւ հսկողութեամբ եղած են:

Հենրիկ Անասեան 2005 աւելի երգեր եւ նուագներ յօրինած է: Լոս Անձելեսի հայութիւնը երկար ժամանակ պիտի յիշէ մեծարեալին

«Երկիր Նայիրի» քանթաթան 1988-ին, «Իմ հայրենիք», «Գնա կուռնկ», «Հայրենիք եւ սէր» սիմֆոնիաները, մեներգներու եւ խմբերգներու կտորները:

Ինչպէս յիշեցինք, մահաթիւնը բեղուն հրատարակագիր մըն է, միաժամանակ ցարդ ութը գիրքերու հեղինակ է եւ տակաւին ունի մօտ տասնեակ մը հրատարակութեան պատրաստ գիրքեր:

Հենրիկ Անասեան ընկերասէր, մարդասէր, գրուցասէր եւ խիստ կատակասէր, անդաւաճան բարեկամ մըն է մարդոց: Ան մարդոց միայն բարին ցանկացող, բարին մաղթող անձնաւորութիւն մըն է, որուն ներկայութիւնը շատ հաճելի է ընկերային ունէ շրջանակին մէջ:

Հենրիկ Անասեան Հայաստան ծնած եւ մօտ 40 տարի Հայաստան ապրելէ ետք, միւս 40 տարիները Լոս Անձելես ապրեցաւ, բայց իր ողջ կեանքի ընթացքին, հակառակ այլատեսակ դժուարութիւններու, ան միշտ Հայաստանով ապրեցաւ, Հայաստանը բնաւ իր կիզակէտէն չհեռացուց. անոր ուրախութիւններով կ'ուրախանար, անոր դժուարութիւններով կը տուայտը: Հայրենասիրութեան ամէնէն վառ տիպարներէն է մեր սիրելի եւ երախտաշատ այս մեծանուն գործիչը:

Այս համեստ բայց անկեղծ գրութեամբ, սրտանց կը շնորհաւորենք երգի եւ գիրի մեծ վարպետ, մեր շատ սիրելի մահաթիւնը Հենրիկ Անասեանը իր ծննդեան եւ գործունէութեան զոյգ տարեդարձներուն առիթով:

Վարձքը կատար, սիրելի մահաթիւն, թող Ձեր շուքը եւ ներկայութիւնը երկար տարիներ շարունակէ մնալ մեր ժողովուրդի եւ հայրենիքի վրայ:

## JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES

**Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ճեմի Աբրահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, թոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:**

### Քաղաքացիութեան Կեդրոն

1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201  
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

**-Քոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ**

**-Նքէ եքքեւ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...**

Passport and Immigration Photos



**Jenny Abrahamian**

Թարգմանութիւններ՝ Հայերէն, Անգլերէն, Արաբերէն, Ռուսերէն, Պարսկերէն կալլի -Լիազօրագրեր/ Appostille

**Ծառայութիւններ**

**-Հէշտ եւ կարճ ճանապարհով հիւանդութեան թոշակ SSI-SSA**

**-Medi-Cal**

**-CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի**



**LIVE SCANS**  
Fingerprinting

## Նոտար/Notary

**Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին**

**Ձեր գաղթականական եւ այլ հարցերու շուրջ ամէն հարցումի պատասխանը մեր մօտ կը գտնուի (Section 8, խնամակալ, եւայլն)**

### ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՆՈՐ ՅԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

15 Մարտին կայացած Տեղապահի ընտրությունները կորսնցնելով հանդերձ կուսակալություն է կազմակերպել «Պատրիարքական փոխանորդ» կոչումով չհրաժարող Արամ Արք. Աթեշեան, նախորդ շաբաթ Տեղապահ Պեթրոսյանի Սրբազանը իսթանպուլ հրախրելով յոթարեցալ պաշտոնը թողելու: Թեև իր հրապարակած նամակներուն մեջ չէր խօսուի «հրաժարումի» մը մասին, բայց կը գոյանար այն ընկալումը թէ Աթեշեան չես այսու պիտի թողու իր աթոռը:

Իսկ ինչպե՞ս կայացաւ այս գարգացումը: Ըստ երեւոյթի երեք գործօններ դեր ունեցան: Առաջին՝ հասարակութեան մօտ ծաւալեցաւ բողոքի ցույցերը: Երկրորդ՝ պետությունը անդրադարձաւ թէ գործընթացը ինդրադարձութեամբ է եւ Աթեշեանի «Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ»-ի պաշտօնին շարունակելով հասարակութեան մօտ նոր խնդիրներու, նոր դժգոհություններու պատճառ պիտի դառնայ: Երրորդ՝ մինչեւ մօտ անցեալ Աթեշեանին կողքին կայնած կարգ մը համայնքային վարիչներ վերջերս կը գլխան իրենց գորակցութիւնը:

Իրականութեան մեջ այս երեք գործօնները զօդուած են իրարու: Ըստ երեւոյթի կարեւորագոյն քայլը կարելի է համարել Արտաքին Գործոց Նախարարութեան պատուիրակութեան մը երկու շաբաթներ առաջ Օրթոգոքի եկեղեցւոյ, Սուրբ Փրկիչ Հիւանդանոցի եւ Գարակէօզեան վարժարանի վարչություններուն տուած այցելութիւնները: Մի գուցէ Արտ Գործ Նախարարութեան պատուիրակութիւնը նկատած է հասարակութեան մօտ ծաւալող խլրտումը եւ «պետություն ընտրութիւնը արգիլելու» ընկալումը եւ որոշած է շարժման անցնիլ: Լսումներու համաձայն պատուիրակութիւնը իր շփումներով փորձած է իմանալ պատրիարքական ընտրութեան խնդրի շուրջ հասարակութեան դիրքորոշումը: Անշուշտ այս հաստատումը կ'ընենք միշտ մեր մտքին ունենալով թուրքիոյ հայոց խնդիրներուն հանդէպ Արտաքին Գործոց Նախարարութեան ներգրաւածութեան աւանդական տարօրինակութիւնը:

Տեղեակ ենք նաեւ թէ այս գործընթացին ներքաշուած համայնքային վարիչներն ալ քաղաքական կամ քրեական պետական այրերուն հետ հանդիպումներ ունեցան: Յայտնի է որ պետությունը կը խուսափի «Աթեշեանի կողքին կայնած» ընկալումի մը պատճառ դառնալ: Հաւանաբար համայնքային հաստատութիւններու վարիչները պետություն այս դիրքորոշումը նկատելով իրենք ալ հրաժարեցան գորակցել եւ Աթեշեանին ալ փոխանցեցին պետություն մերձեցումը: Այլ կերպ շատ դժուար էր թէ Աթեշեան յօժարէր պարտականութիւնը թողելու: Զի որ մինչեւ օրս ան իր ուժը կ'ապահովեր «Պետությունը գիտ կեւուզէ» ընկալումէն:

Ներկայ դրութեամբ ընտրություն գործընթացը սկսած է: Անշուշտ որ ուրախաւիթ գարգացում մըն է այս, բայց կը խորհինք թէ ուրիշ գործընթաց մը եւս սկսած է: Միայնակ լեցուն շրջան մը բոլորելով պետությունը նստած եղաւ պատրիարքի ընտրություն ճիշդ կեդրոնը: 26 Հոկտեմբերին պատրիարքական աթոռին թափուր ըլլալուն մասին կրօնական ժողովի որոշումը դիտումնաւոր կամ անգիտակցաբար պատկան մարմիններու տեղեկացնելու

թերանալով գործընթացը անելի մատնող այս հասարակութիւնն է: Աւելի ճիշդ բացատրութեամբ այս հասարակութեան վարչախնները: Այն վարչախնները՝ որոնք առանց «պետություն» ոչ մէկ բան ընելու կարող են:

Տուեալ պայմաններու մեջ առանց քաղաքական կամ քի հետ գործակցելու խնդիրը լուծել անկարելի դարձաւ: Իրականութեան մեջ այս մեր աւանդական թերութիւններէն է: Մեր կարգ մը վարչախններ սովորութիւն դարձուցած են ամէն քայլափոխին դէպի պետություն նայելու եւ ապա «պետությունը այսպէս կեւուզէ» ըսելով հասարակութիւնը կարգի բերելու սխալ հակացողութիւնը: Գժբախտաբար այս վերջին գործընթացն ալ նոյն ձախողութիւնով ընթացաւ: Յուսանք թէ այս կացութիւնը չես այսու աւանդութեան մը չի վերածուի: Նաեւ յուսանք թէ պետությունն ալ իր

կարգին նման գործելակերպի մը ցանկացողը չի դառնար:

Գալով ապագային, գրականութեան մեջ կայ «Քինկ Մէյքըր» կոչուած հակացողութիւն մը, որ ծագած է Անգլիայէն: Իմաստի ստուգաբանութիւնը պիտի պարզէ «գահ բարձրացողը ճշդող անձ»: Մեր համայնքին մեջ ալ կայ նման յաւակնութեան դիմող անձեր: Նոր շրջանի ամենակարեւոր խնդիրը ճիշդ ալ այս «Քինկ Մէյքըր»-ի երեւոյթը պիտի շարունակուի, թէ ոչ: Կարեւոր հարցում մըն է այս, քանի որ անցնող շրջանին այս թերակատարութեան առկայութիւնը փորձեցինք: Նոյնիսկ քիչ մը կանխկարծեալ ձեւով կրնանք ենթադրել թէ «Քինկ Մէյքըր»-ները արդէն հաշիւներ ըրած են նորընտիր պատրիարքի մը մասին: Թերեւս յանդգնած են պետություն հետ այս մասին սակարկութիւններու մեջ մտնել: Ուրեմն նոր շրջանի կարեւոր հար-

ցադրումներէն մէկը այս է: Միւս կողմէն կը խօսուի պատրիարքի ընտրություն վերաբերեալ նոր կանոնագրութեան մը մասին: Պատրիարքական փոխանորդի կոչումը բնութագրելու կամ պատրիարքի պաշտօնէութեան տարածքը յստակացնելու ուղղեալ գանազան նիւթերու շուրջ կարծիքի փոխանակումներ կը կատարուին: Անշուշտ այս նիւթերը մեծ լրջութեամբ քննարկուելու արժանի են: Միւս կողմէ թուրքիոյ Հայոց Եկեղեցւոյ իր որոշումները կայացնելու պահուն անկախութիւնը ապահովելը դարձեալ խիստ կարեւոր է: Բազմաթիւ հարցումներ կան, որոնք պատասխան կը սպասեն: Որոշ է որ նոր շրջանը այդ խնդիրներու բազմակողմանի քննարկումներու շրջանը պիտի ըլլայ նաեւ: Յուսանք թէ այդ քննարկումը կը կատարենք ներքին թերութիւններէն ձերբազատուած կերպով:

«ԱԿՕՍ»-ի ոսպնեակէն



JOIN US

Advocating for the public education all California students deserve!

Sign the Pledge to Keep Our Public Schools Public

Learn more at CTA.org



# ՍԵՌԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՐՆ. «ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ՄԵՐ ՊԱՏԵԱՆԻՆ ՄԷՋ ԱՊՐԻԼ ՄԻԱՅՆ»

ԴՈԿՏ. ԶՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Արաբական ծոցի տարածաշրջանին մէջ Մէդիա-Արաբիան կը նկատուի այն եօթը երկիրներէն մէկը, որ Աստուածաշունչի մեր ընկերութեան աշխատանքային իմ պատասխանատուութեան ծիրին մէջ կ'ընդգրկուի: Բայց նկատի ունենալով, որ երկիրը «գոց» է քրիստոնէական ներկայութեան համար, կարելի չէ եղած հոն այցելել աշխատանքային իմ երկար տարիներու ընթացքին:

Հաւանաբար պէտք էր սպասել պատեհ օրուան եւ առիթին:

ԵՌԻՆԵՍՏՐՈՒՄ-ն, որ Միացեալ ազգերու կազմակերպութեան կրթական-գիտական եւ մշակութային հիմնարկ-յան ձեռնարկով է, կազմակերպած էր իր եօթներորդ համախմբումը 3-4 մայիս 2017-ին, իսկ վայրը որոշած էր Ռիատ՝ Մէդիա-Արաբիոյ մայրաքաղաքը: Եւ նկատի ունենալով, որ Աստուածաշունչի ընկերութեան մեր կեդրոնական գրասենեակը անդամ է ԵՌԻՆԵՍՏՐՈՒՄ-ի, ստացած էր հրաւեր՝ մասնակցելու այս ժողովին: Այդ հրաւերին ընդառաջելը վստահութեամբ ինձի ներկայացնելու մեր կազմակերպութիւնը այս «գոց» երկրին մէջ:

ԵՌԻՆԵՍՏՐՈՒՄ-ն իր այս տարեկան ժողովը կեդրոնացուցած էր երիտասարդական մտահոգութիւններու եւ ներկայի ընկերային-քաղաքական կեանքին մէջ անոնց դերին ու ներդրումին վրայ:

Բայց նախ պէտք էր մոտքի արտօնագիրը, ուր կար իմ անունս եւ անունը այն կազմակերպութեան, զոր պիտի ներկայացնէի: Եւ իմ պարագայիս՝ Աստուածաշունչի ընկերութիւնը:

Եւ «մտմտութեամբ» սկսաւ մէջս, թէ ինչպէ՛ս պէտք էր պատասխանել գործիս բովանդակութիւնը եւ անոր պարունակութիւնը պարզաբանելու վերաբերող հարցումին, զոր պիտի ուղղուէր դեսպանատան կողմէ՝ արտօնագիրը (չ)շնորհէ՛լ առաջ:

Բայց պէտք է հաւատալ ու ակնկալել, որ կրնայ պատահիլ անսպասելին. այդպէս ալ եղաւ, մոտքի արտօնագիրը անցագրիս մէջ գետեղուեցաւ առանց հարց ու փորձի: Եթէ առաջին «քննութեանէն» ձեռով մը անցած էի, բայց տակաւին կար երկրորդը՝ օղակայանը:

Պաշտօնեային դէմքին վրայ ուրուագծուեցաւ ժպիտ: Մայրիներու մեր երկիրը ունի յատուկ ջերմութիւն մը՝ Արաբական ծոցի երկիրներուն համար: Ունեցանք «հաճելի» գրոց, մինչ պաշտօնեան կը կատարէր կարգ մը սովորական ստուգումները: Եւ «հաճելի» գրոցներն ալ արաբական օղակայաններուն եւ անոնց մշակոյթին մէկ մասն են: Այլ օղակայաններու մէջ նման երեւոյթի յաճախ չես հանդիպիր:

Համագումարին սկսայ մասնակցիլ աւելի հանգիստ եւ ինքնավստահ: Վերջապէս մոտք գործած էի «գոց» երկիրը, այդ ալ՝ պաշտօնական հանգամանքով: Ուղեցի տեսնել, թէ ինչն է իւրաքանչիւրը այս երկրին:

Համաժողովին կը մասնակցէին աւելի քան 1500 ներկայացուցիչներ՝ 350 կազմակերպութիւններ:

րէ: Բաւական մեծ թիւով ներկայացուցիչներ՝ նաեւ Մէդիա-Արաբիայէն, կարեւոր մասը՝ երիտասարդներ: Ժամանակս ու հանդիպումները առաւելաբար կեդրոնացուցի տեղացի սէնտրներուն հետ տեսակցելով: Վերջապէս, կ'ուզէի զգալ տեղական «բազկերակը», որպէսզի գիտնայի եւ հասկնայի, թէ ինչ էր այդ «գոց»-ը:

Եւ իւրաքանչիւր երիտասարդ սէնտրի հետ հանդիպումին սկսաւ քիչ մը աւելի «բացուիլ» ինձի համար «գոց» նկատուող այդ երկիրը: Սկսած էի տեսնել երիտասարդութիւն մը, որ ուսեալ եւ զարգացած է, տիրապետած է մէկ կամ երկու օտար լեզուներու, ստացած է համալսարանական բարձրագոյն վկայականներ, եւ որ կը խօսին հանգիստ եւ առանց քաշքշուքի: Իրենց երկրին նկատմամբ



տածած անոնց սէրը՝ մշակոյթի պահպանումը, բայց նաեւ օտարին՝ «ուրիշին» նկատմամբ բացուելու անհրաժեշտութիւնը կարեւոր գրական էր բոլորին համար: Եւ իւրաքանչիւր երիտասարդի հետ հանդիպումին կար հիմնական մտահոգութիւնը՝ «կարելի չէ մեր պատ-

եանին մէջ միայն ապրիլ այլեւս»: Կը զգայի, որ անոնք կ'ուզէին տեսնել, բայց նաեւ ընդունիլ անոնք, որոնք իրենցմէ չեն եւ իրենց պէս չեն, եւ որ՝ պէտք է ապրին «անոնց» հետ նաեւ...

Շար.ը էջ 19



## ՅՈՒՆԵՍԿՈՒՄԻԱԿԱՆ ՀԱՆՌԻՍՈՒԹԻՒՆ

# ՇԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ

Մնդեան 80 և Ստեղծագործական Գործունէութեան 60 Ամեակներուն

Բարձր հովանաւորութեամբ՝

**ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ**

**ԳԼԵՆԴԵՆԻՆԻ ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԵԱՆ**

Կազմակերպութեամբ՝

**ՄԱՇՏՈՅ ԳՈԼԷՃԻ**

Կատարողութեամբ՝

**ՍԻՓԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԵՒ**

**ՍԻՄՖՈՆԻԿ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻ**

**Յունիս 25, 2017, ժամը 6:00ին**

Glendale High School  
1440 E. Broadway • Glendale, CA 91205



**ԱՐՍԵՆ ԱՆԱՍԵԱՆ**



**ԱՐԱՄ ԱՆԱՍԵԱՆ**



**ԱՆԱԳԻՏ ՆԵՐՍԻՍԵԱՆ**



**ՍԱՐԳՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ**



**ՍԱՐԵՆ ՄԱՅԻԼԵԱՆ**



**ՊԵՂՈՒՆ ՊՈՂՈՍԵԱՆ**



**ՈՒԻԲԵՆ  
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**



**ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՅՈՂՈՒԼԵԱՆ**

Մասնակցութեամբ՝

Թեքեան Մշակութային Միութեան • Բամապայիս Բայ Կրթական և Մշակութային Ընկերակցութեան  
Նոր Սերունդ Մշակութային Միութեան • Լոս Անճելըսի Իրանաբայ Միութեան  
Իրաբաբայ Ընտանեկան Միութեան • Բայ-Ամերիկեան Թատերա-Երաժշտական Միութեան  
Գալիֆօրնիոյ Բայ Գրողներու Միութեան • Նարեկ Մշակութային Բաժնետիրութեան

**818.265.0506**  
**TicketMicket**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՊԱՐՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՐ ՏԻԱԾ ԽՈՍՏՈՒՄԸԳՈՐԾԻ ԵՆՔ ՎԵՐԱԾՈՒՄ

## WE TRANSFER WORDS INTO ACTION ON BEHALF OF CHILDREN OF ARMENIA LIVING UNSAFE AND UNHEALTHY

Մեծ ուրախությամբ յայտնում ենք, որ Հայաստանի ծնողագուրկ եւ հաշմանդամ կարիքաւոր երեխաներին օգնող «Հայ-Ամերիկեան» Ֆոնդին պատկանող 9-րդ մանկադպրոցական 36,000 քառակուսի ուտք տարածք ունեցող 2-յարկանի «Լապտերիկ» մանկապարտեզի շէնքի պաշտօնական բացումը Գիւմրիում, որը տեղի կունենայ Յունիս 23, 2017 թուականին՝ Հայաստանի բոլոր լրատուական հեռուստակայանների եւ մամուլի պաշտօնական անձանց, ժողովրդի, ուսուցչական կազմի եւ 300-ից ավելի երեխաների մասնակցությամբ:

Այն անձինք, որոնք ցանկութիւն ունեն որեւէ առիթով յուշատախտակներ ունենալ իրենց կամ իրենց սիրելիների յիշատակին դպրոցի մուտքին իբրեւ հովանաւորներ, կարող են անմիջապէս մեզ հեռախօսել 1-818-246-0125 կամ 1-818-239-6880 եւ (818) 246-2070 համարներով:

Ձեր վստահութիւնը սատարում է ծրագրերի, որոնք կը բարելաւեն Հայաստանի կիսաւեր եւ անապահով մանկատներում ապրող եւ յաճախող երեխաների կեանքը:

Ձեր սիրելի հարազատների յիշատակները յաւերժացնելու համար լաւագոյն առիթն ու միջոցն է յուշատախտակներով անմահացնել նրանց անունը, ինչպէս նաեւ տխուր առիթներով փոխան ծաղկեպսակի Ձեր նւիրատութիւնները կատարէք «Հայաստանի ծնողագուրկ հաշմանդամ կարիքաւոր երեխաների ֆոնդ»-ին:

Յարգելի հայրենակից, Ձեր այս հայրենասիրական ու մարդասիրական ազնիւ ժեստով, դուք լաւագոյն կերպով սատարած կը լինէք հայրենի մեր երեխաներին առողջ, երջանիկ ու շնորհակալ ամենօրեայ կեանք ապահովելու նւիրած սրբազան ու ազգանւէր ջանքերին, որի համար յայտնում ենք մեր կանխայայտ շնորհակալութիւնները:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ առողջ լինէք եւ Աստուած մէկի տեղ տասով հատուցէ Ձեզ:

Յովհաննէս Բալայեան՝ Նախագահ եւ Ֆոնդի Գործադիր Մարմին



**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC. FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES (Established 1999)**

**Fellow Armenians - Americans**

WE INVITE YOU TO JOIN OUR YEAR-ROUND HUMANITARIAN PROJECTS IN ARMENIA, SO TOGETHER WE CAN CONTINUE TO DELIVER REAL AND TIMELY HELP TO THOUSANDS OF DISABLED AND ORPHAN CHILDREN IN OUR BELOVED HOMELAND. YES, YOU CAN MAKE A DIFFERENCE IN THESE CHILDREN'S LIFE.

ACT NOW. JOIN THIS IMPORTANT MISSION TODAY. YOUR GENEROUS TAX-DEDUCTIBLE DONATIONS CAN HELP ARMENIA'S NEEDY CHILDREN TO GROW UP AS HAPPY, HEALTHY, AND PRODUCTIVE INDIVIDUALS.

P.O.BOX 250038, Glendale, CA 91225 • Tel: (818) 246-0125, (818) 239-6880 • (818) 606-2070 • Fax: (818) 246-7467 • e-mail:forourkids99@gmail.com • www.forourkids99.com Non-profit organization a tax-exempt 501(c) 3 charity ID #27-1381531

**Write your check to: Armenian American Orphans Christmas Fund, Inc.**



### ՀՈԳԵԿԱՆ ՑՆՑՈՒՄՆԵՐՈՒ ՓՈՒԱՆՑՈՒՄԸ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Կեանքի ընթացքին հոգեկան ցնցումները անխուսափելի են: Բոլոր մեր մանկութեան կամ պատանեկութեան ընթացքին, ինչպես նաև չափահաս տարիքին ենթարկուած ենք հոգեկան ցնցումներու, սակայն անոնց սաստկութիւնն է, որ կը տարբերի: Ոմանք կ'ենթարկուին սաստիկ ցնցումներու, իսկ ուրիշներ միջին կամ շատ մեղմ հոգեկան կամ զգացական ցնցումներու:

Մասնագէտներու համաձայն՝ հոգեկան ցնցումները կամ trauma-ները ունին քանդիչ եւ կառուցողական յատկանիշեր: Սաստիկ հոգեկան ցնցումները կրնան պատճառ դառնալ հոգեկան հարցերու, ինչպէս՝ ընկճուածութեան, իսկ մեղմ կամ միջին ցնցումները կրնան զօրացնել անհատին դիմադրողականութիւնը:

Այս գծով նախապէս կատարուած հոգեբանական եւ ծինային հետազոտութիւններ պարզած են թէ հոգեկան ցնցումները վատ յատկութիւնները կրնան փոխանցուիլ սերունդէ սերունդ: Այլ խօսքով, հոգեկան ցնցումներու ենթարկուած անհատներու զաւակները մեծ հաւանականութիւն կրնան ունենալ տառապելու զգացական հարցերէ, անձկութենէ, ճնշուածութենէ եւ ընկճուածութենէ:

Հոգեկան ցնցումի սերունդներու միջեւ փոխանցման գծով կատարուած նոր փորձարկումներ

պարզած են թէ վատ յատկանիշերու կողքին, ցնցումներու դրական հետեւանքները եւս կրնան ծիներու դրուութեամբ փոխանցուիլ անհատի մը զաւակներուն: Այսինքն՝ եթէ անհատ մը ենթարկուելով հոգեկան ցնցումները յաջողած է անոնց դիմադրել եւ շրջանցել, այս յատկութիւնը կրնայ փոխանցել յաջորդող սերունդին:

Այս հետազոտութիւնը կատարուած է Զիւրիխի համալսարանի հետազոտական խումբին կողմէ: Նորագոյն ուսումնասիրութեան շնորհիւ գիտնականները յայտնաբերած են մոլեգիւղներ, որոնք կրնան փոխանցել հոգեկան ցնցումներու դրական յատկանիշերը: Գիտնականները այս փորձարկումը կատարած են մոլեգիւղ մասնակցութեամբ, որոնցմէ մաս մը ծնունդէն ետք բաժնուելով իր մօրմէն ենթարկուած է հոգեկան ցնցումի:

Հետաքրքրական է հետազոտութեան արդիւնքը, ըստ որուն՝ ճնշուածութեան եւ ցնցումներու ենթարկուած մոլեգիւղն ու իրենց զաւակները աւելի արդիւնաւէտ ձեւով կը լուծեն իրենց ներկայացուած խնդիրները: Գիտնականները կը շեշտեն թէ յատկապէս մանկութեան ցնցումները բնաւ դրական չեն եւ նախընտրելի է, որ անոնք չպատահին: Կեանքի ընթացքին միջին եւ մեղմ ցնցումները կրնան օգտակար ըլլալ:

### ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՄԵՂ ՈՒՏԵԼԻՔԻ ԲԱՂԱԴՐՈՂ

Միացեալ Թագաւորութեան մէջ գտնուող Օքսֆորտի համալսարանի հետազոտները իրենց հետեւողական ուսումնասիրութիւններուն շնորհիւ կը ջանան յայտնաբերել կապը՝ երաժշտութեան եւ ուտելիքի համի ըմբռնումին միջեւ: Հետաքրքրական է, որ երաժշտութեան տարբեր յատկանիշերը կրնան տարբեր ազդեցութիւն ունենալ համի ըմբռնումին վրայ: Ուսումնասիրութեան արդիւնքներուն համաձայն՝ բարձր ձայնաստիճան ունեցող երաժշտութիւնները, որոնց մէջ օրինակի համար կ'իշխէ սրինգը, կը շեշտեն ուտելիքի քաղցրութիւնը եւ թթուութիւնը: Իսկ ցած ձայնաստիճանի պատկանող երաժշտութիւնները կը շեշտեն լեղի համը:

Այս ուսումնասիրութեան գլխաւոր հեղինակն է հետազոտ՝ Չարլզ Սթէյնս, որ կը բացատրէ թէ իր այս ուսումնասիրութեամբ ան կը փորձէ ցոյց տալ թէ ըմբռնումի եւ յատկապէս համերու ըմբռնումի ժամանակ մէկէ աւելի զգայարաններ կը գործեն միեւնոյն ժամանակ: Հետեւաբար, ըմբռնումը պարզապէս մտային աշխատանք մը համ զգացում մը չէ, այլ՝ փորձառութիւն է: Սթէյնս իր ուսումնասիրութեան որպէս առարկայ ընտրած է համերու ըմբռնումը, որովհետեւ ան կ'ենթարդէ թէ յատկապէս համերու ըմբռնման ժամանակ է, որ զանազան զգայարաններ կ'օգտագործուին:

Ուտելիքի համի փորձառութեան մէջ ձայներու եւ երաժշտութեան կողքին մեծ դեր ունի նաեւ ուտելիքին կազմուածքը: Երբեմն մարդիկ կը մերժեն ուտելիքը պարզապէս որովհետեւ անոր կազմուածքը հաճելի չի թուիր իրենց: Այս ուտելիքներու ամէնէն լաւ օրինակներէն է իսկ արմաւը կամ խիտուշը: Իսկ այլ ուտելիքներու պարագային, անոնց կազմուածքն է, որ հաճելի կը դարձնէ համը: Օրինակ



ճէլոն, չիփսը, գովաջուցիչ խմիչքները մաս կը կազմեն այս ուտելիքներու կամ ըմպելիքներու շարքին: Յաւելեալ բացատրութիւններ տալով իր կատարած հետազոտութեան մասին, Սթէյնս դիտել կու տայ թէ ծովափին վրայ ձուկ ուտելը աւելի հաճելի է քան տան խոհանոցին մէջ ուտելը, որովհետեւ ձուկերու եւ ծովային պտուղներու հետ կապուած ծովուն ձայները կը շեշտեն ուտելիքին համեղութիւնը: Իր կատարած ուսումնասիրութիւններու ընթացքին, Սթէյնս յաճախ խնդրած է մասնակիցներէն, որ ուտելիքի համեր կապեն տարբեր ձայնաստիճան ունեցող երաժշտութիւններու հետ:

Ուսումնասիրութեան արդիւնքներէն մէկն էլով, Սթէյնս եւ իր հետազոտական խումբը կ'ըսեն թէ երաժշտութեան միջոցով կրնան 5-էն 10 համեմատութեամբ ազդել համի ըմբռնումին վրայ: Հետեւաբար, տօնական օրերուն կարելի է ի մտի ունենալ Սթէյնսի կատարած այս հետազոտութիւնը եւ ընթրիքի ժամանակ անպայման միացնել ձայնաստիճանը կամ հիւրերու նախափրած երաժշտութիւնը:

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ

### ՈՒՐԱՆ ԶՈՅԳԵՐՈՒ 10 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.Նոյն ժամանակ քնանալ: Բոլոր գոյգերը իրենց յարաբերութեան սկիզբի հանգրուաններուն կը փափաքին նոյն ժամանակ քնանալ, նոյնիսկ երբ անոնց աշխատանքային ժամերը տարբեր ըլլան: Ըստ հոգեբաններուն, այս սովորութիւնը պէտք է պահպանուի մինչեւ վերջ, որովհետեւ ան կը ստեղծէ թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ հոգեբանական մտերմութիւն:

2.Նոյնանման հետաքրքրութիւններ մշակել: Իւրաքանչիւր անձ տարբեր է միւսէն եւ այս տարբերութիւնն է, որ կը ստեղծէ անհատի մը «ես»ը: Սակայն չափազանց տարբերութիւնները կրնան ժխտական ազդեցութիւն ունենալ յարաբերութեան վրայ: Յարատեւ ջանքերով եւ փոքրիկ ջանքերով կարելի է ստեղծել նոյնանման հետաքրքրութիւններ, որպէսզի իւրաքանչիւր անձ չկորսուի իր անձնական աշխարհին մէջ՝ մոռնալով իր կողակիցը:

3.Ձեռքերը բռնած կամ կողք կողքի քալել: Թէեւ նման երեւոյթ մը աւելի սովորական է նորակազմ գոյգերու մօտ, ձեռք բռնելու կամ կողք կողքի քալելու սովորութիւնը չի վնասեր մնացեալ գոյգերուն: Ուրախ գոյգերը կ'անդրադառնան այս սովորութեան կարեւորութեան:

4.Վստահիլ եւ ներել: Անհամաձայնութիւնները անխուսափելի են յարաբերութեան մէջ, սակայն հարցերը լուծելու ամէնէն արդիւնաւէտ միջոցներէն է վստահութեամբ եւ ներելով զայն աւարտելը:

5.Կեդրոնանալ դրական կէտերուն վրայ: Զոյգերու մօտ երբեմն կը յառաջանայ կողակիցին սխալներուն անդրադառնալու եւ անոնց վրայ կեդրոնանալու սովորութիւնը: Ուրախ գոյգերը նաեւ կը կեդրոնանան իրենց կողակիցի դրական արարքներուն եւ վարմունքին վրայ:

6.Ֆիզիքական մտերմութիւնը պահպանել: Գիտական հետազոտութիւնները պարզած են թէ ֆիզիքական հաղորդակցութիւնը կը բարձրացնէ հաճոյք պատճառող եւ ընկճուածութեան դէմ պայքարող հորմոններու քանակը:

7.Իւրաքանչիւր առաւօտ լաւ խօսքերով դիմաւորել զիրար: Անօրեայ կեանքի ճնշուածութիւնը եւ տաղտուկները, ինչպէս նաեւ աճապարանօք վիճակը կրնան պատճառ դառնալ, որ յատկապէս առաւօտեան ուշադրութիւնը չդարձնենք մեր կողակիցին: Սակայն, ուրախ գոյգերը չեն մոռնար դրական խօսքեր ուղղել իրենց կողակիցին՝ նախքան աշխատանքի մեկնիլը:

8.Ամէն գիշեր նախքան քնանալը գիշեր բարի ըսել: Ըստ հոգեբաններու, «Գիշեր բարի» ըսելու սովորութիւնը կարեւոր բաղադրութիւն է ուրախութեան եւ մտերմութեան պահպանման: Որքան ժամանակ անցնի յարաբերութեան մէջ այնքան աւելի կարեւոր կը դառնայ նման մանրամասնութիւններու գոյութիւնը:

9.Օրուան ընթացքին ստուգել «կացութիւնը»: Կարեւոր է, շարունակական կապի մէջ մնալ կողակիցին հետ ստուգելու համար անոր հոգեկան վիճակը: Երկար ժամանակ կապի բացակայութիւնը կրնայ անակնկալներու առջեւ դնել մեզ հանդիպման ժամանակ:

10.Հպարտ ըլլալ կողակիցով: Որքան կարեւոր է յարաբերութեան յաջողութիւնը այնքան կարեւոր է կողակիցներու անհատական ուրախութիւնն ու հանգստութիւնը: Մեր կողակիցը պէտք է ըլլայ մեր հպարտութեան աղբիւրներէն մէկը: Հպարտութիւնը կը վերանորոգէ սիրոյ, մտերմութեան եւ երջանկութեան զգացումները:

### ԵՐՄԱԿ ՄԱՁԵՐՈՒ ԿԱՂԱԺԱՍ ՅԱՅՏՆՈՒԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ


Վաղ թէ ուշ կ'ինքնընկալեն եւ տղամարդոց մազերը կը ճերմկանան: Իբրեւ կանոն, անոնք կը յայտնուին մեծ տարիքին, սակայն կրնան յառաջանալ նաեւ միջին տարիքին: Տեսնենք թէ ինչ են անոր պատճառները եւ ինչպէս պէտք է պաշտպանուի անոր դէմ: Առաջին հերթին, ճերմակ մազերը կրնան յայտնուիլ ժառանգական պատճառով:

Եթէ ձեր ազգականներուն մազերուն մէջ ճերմակը առաջին անգամ յայտնուած է 40 տարեկանին, ուրեմն հաւանական է, որ ձերը նոյնպէս այդպէս ըլլայ: Շատ հնարաւոր է, որ ճերմակ մազերը ոչ թէ ճնշման արդիւնք են, այլ՝ ժառանգականութեան:

Այդ պարագային մազերը ներկելը խնդիրէն ազատուելու ամենատարածուած միջոցն է: Սակայն՝ ոչ միշտ: Սովորաբար քիմիական նիւթերուն ազդեցութիւնը աւելի կը տկարացնէ մազերուն կառուցուածքը եւ կ'արագացնէ գործընթացը: Ժառանգականութիւնը կրնայ սպիտակ մազերու պատճառ ըլլալ նաեւ 20 տարեկանին:

Երկրորդը, ճերմակ մազերը կրնան յայտնուիլ սխալ կենսակերպի իբրեւ արդիւնք:

Եթէ դուք կը չարաչափ վնասակար սովորութիւնները՝ ալքոհոլը, ծխախոտը, ուստի անոնց յայտնուելուն հաւանականութիւնը կը մեծնայ: Մազերու ճերմկելուն



կը նպաստեն նաեւ յաճախակի ճնշումները, անքնութիւնը, կենսակերպը պակասը: Փորձեցէք ձիւղ սնուիլ, անպայման մարմնամարզանքով զբաղիլ: Մննդակարգ մտցուցէք լուբիպի ընտանիքին պատկանող ուտելիքները, ընկուզեղէնը, ձկնեղէնը եւ կաթնամթերքը: Ասոր գուրգահեւ պէտք է մազերը ձիւղ խնամել: Ատիկա կ'օգնէ մազերուն առողջութիւնը երկար պահպանելու:

Երրորդը, ճերմակ մազերը կը յայտնուին առողջական խնդիրներու պատճառով: Աւելի յաճախ խնդիրը կապուած է վահանաձեւ գեղձի հետ: Կրնան նաեւ խնդիրներ ըլլալ գեղձերու համակարգին հետ: Այդ պատճառով անպայման պէտք է դիմել բժիշկի՝ խնդիրը պարզելու համար:

### ՕՁՈՒՆԻ ՍԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՈՒՄԸ



Լոռու մարզի Օձուն գիւղի VI դ. Սբ Աստուածածին եկեղեցու վերականգնման աշխատանքը նախատեսված է աւարտել Հոկտեմբերի 5-ին: «Արմենպրես»-ի հետ զրոյցում Օձունի հոգեւոր հովիւ Տէր Վրթանէս քահանայ Բաղալեանը նշեց, որ աշխատանքները պատշաճ կարգով եւ որակեալ իրականացուած են:

«Աշխատող մասնագէտները բաւական փորձառու են: Նրանցից շատերը այլ երկրներում աշխատելու առաջարկներ են ստացել, սակայն նախընտրեցին մնալ հայրենիքում եւ իրենց նպաստը բերել Օձունի եկեղեցու վերականգնման աշխատանքներին: Շատ փորձառու վարպետներ ունենք՝ Համլետ Յակոբեան, Դերենիկ Յակոբեան, Թադեւոսեան եղբայրներ, Գեղամ Մուրադեան, Գարեգին Մանուկեան եւ այլք: Բանուորական ուժը գիւղից է», -ասաց Տէր Վրթանէս քահանայ Բաղալեանը:

Վերականգնման աշխատանքները սկսուել են Ապրիլի 4-ից: Նախատեսված է վերականգնել եկեղեցու արտաքին բաց սրահների բոլոր 6 կամարները, որոնք քանդուել էին անցած դարի 80-ական թուականներին, վերականգնել պատերը եւ քիւերը: Բոլոր պատուհաններին կը տեղադրուեն նոր փայտէ շրջանակներ եւ քարէ լուսամուտագոգեր՝ պատրաստուած հնագոյն նախադասի պերի օրինակով: Վերականգնողները ձեռք են բերել ներարկման արդիւնաւէտ նիւթեր, կարանախցումների համար օգտագործուած է բարդ կրաշաղար: Տաճարի շուրջը նախատեսուած է կառուցել ջրահաւաքման եւ ջրահեռացման համակարգ: Աշխատանքներն իրականացուած են Հայաստանի մշակութի նախարարութեան գիտամեթոդական խորհրդի կողմից հաստատուած նախագծի համաձայն: Այս փուլում 63 մլն դրամի աշխատանքներ են նա-

խատեսուած:

«Նախատեսված է Հիւսիսային կամարակապ սրահը վերականգնել Հարաւային կամարակապ սրահի նիւթին համահունչ: Աշխատանքները բաւական լաւ իրականացուած են, պարզապէս իմ ցանկութիւնն է, որպէս գործող եկեղեցի, սրահներն ամբողջացուեն, որպէսզի պրակտիկ օգտագործուեն: Յանկալի կը լինէր, որ այս փուլից յետոյ աշխատանքների եւս մէկ փուլ լինի եւ սրահներն ամբողջացուեն», -ասաց նա:

Եկեղեցու վերականգնման աշխատանքների ֆինանսաւորումը կատարուած է բարերար Մովսէս Չաւարեանը: Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Լեւզուկ» ընկերութիւնը:

Քահանան տեղեկացրեց, որ շինարարական աշխատանքներն այնպէս են կազմակերպուած, որ եկեղեցու որեւէ հատուած փակուած չէ:

«Եկեղեցու գործունէութեան ոչինչ չի խոչընդոտում: Մենք օրական 150-200 օտարագիր այցելուներ ենք ունենում: Փորձառու վարպետների միջոցով զբօսաշրջիկները հնարաւորութիւն ունեն մասնակցել տեղում մաստեր կլասի, տեսնել, թէ վարպետն ինչպէս է ձեռքով վերականգնում», -աւելացրեց Վրթանէս քահանայ Բաղալեանը:

Օձունի Սբ Աստուածածնի վերականգնման նախորդ՝ առաւել մասշտաբային փուլն ընթացել է երեք տարի եւ յաջողութեամբ աւարտուել 2014 թ.: Վերականգնուել է զմբէթն իր նախնական տեսքով եւ խաչով հանդերձ, հիմնովին ամրացուել են պատերը: Այս աշխատանքների կատարման ընթացքում յայտնաբերուել են VI դ. գարդանախշերի դրուագներ եւ կղմինդրի նմուշեր: Մասնագէտների կարծիքով, վաղմիջնադարեան հայոց ճարտարապետութեան գլուխգործոցն այսպիսով փրկուել է հնարաւոր աւերումից:

#### ԱՊԱՔԻՆՄԱԸ ՄԱՂԱՆԲ

Գաղութիս ծանօթ ազգայիններէն Տիար Աւօ Մարգարեան, արկածի հետեւանքով վերջերս ենթարկուած է վիրաբուժական լուրջ գործողութեան մը եւ ներկայիս կը բոլորէ կազդուրման շրջանը: Արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք իրեն:

\*\*\*\*\*

Նմանապէս գաղութիս ծանօթ ազգային գործիչ եւ հրապարակագիր Տիար Խաչիկ Ճանոյեան ենթարկուած է սրտի վիրաբուժական յաջող վիրահատութեան մը: Արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք իրեն:


«Մասիս»

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆ ԶԱՐԱՏԻ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐՆ ՈՒ ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿԱՏՈՒՆԵՐՈՒՆ



Ձահրատ, որ երգիծական ոճով եւ ընդարձակ երեւակայութեամբ նոր շունչ մը հաղորդած է հայկական քերթողութեան, կատուներու նուիրուած կամ կատուներու վերաբերող բանաստեղծութիւններով կը ներկայանայ ընթերցողներուն:

Արաս հրատարակչատան կողմէ երկըզու (հայերէն ու թրքերէն) հրատարակուած հատորը կը ճոխանայ նոյնինքն Ձահրատի կատարած կատուի գծագրութիւններով, որոնք իր անձանօթ մէկ տաղանդն ալ կը բացայայտեն: Հեղինակին բանաստեղծութիւնները թրքերէնի թարգմանած է Յովհաննէս Շաշքալ:

Ձահրատ իր գծագրութիւններուն մէջ առհասարակ որդեգրած է խորանարդապաշտ ոճ մը, ինչ որ ցոյց կու տայ, թէ ան եղած է իրեն ժամանակակից



ծայրին» (2001), «Զուրը պատէն վեր» (2004): Իր քերթուածները թարգմանուած են 22 լեզուներու: Երգիծական կարիչ Օհան



հոսանքներուն հետեւող տաղանդաւոր «սիրող» մը: Կատուներու հետ մէջ մէջի ապրած, զանոնք իր կեանքի անհրաժեշտ մէկ մասնիկը դարձուցած քերթողին գեղեցիկ ու նոյնքան անկեղծ քերթուածները կը պարզեւեն հաճելի ընթերցանութիւն մը՝ միանալով գունաւոր դիմանկարներուն:


Ձահրատին բանաստեղծութիւնները ցոյց կու տան, թէ դեռ շատ բաներ ունինք «կատուներէն» սորվելիք:

#### ԶԱՀՐԱՏ

Ձահրատ, բուն անունով Չարէհ Եալըզճեան, 10 Մայիս 1924-ին ծնած է Պոլիս, Նշանթաշը թաղը: Հօրմէն որբացած է երեք տարեկան հասակին: 1942-ին աւարտած է Փանկալթըի Միսիթարեան վարժարանը: Երեք տարի ուսանելէ ետք կիսաւարտ թողած է Ստանպուլի համալսարանի բժշկութեան ֆաքուլթէն: Սկսած է զբաղիլ առեւտրով:

Առաջին բանաստեղծութիւնը հրատարակուած է 1943-ին, «Ժամանակ» օրաթերթին մէջ: Առաջին գիրքը՝ «Մեծ քաղաքը», հրատարակուած է 1960-ին: Յաջորդ գիրքերն են «Գունաւոր սահմաններ» (1968), «Բարի երկինք» (1971), «Կանանչ հող» (1976), «Մէկ քարով երկու գարուն» (1989), «Մաղ մը ջուր» (1995), «Ծայրը

(Յովհաննէս Շաշքալ) Ձահրատի կարգ մը բանաստեղծութիւնները թարգմանած է թրքերէնի՝ Yag Damlasi («Իլի Շէյքեր») հրատարակչութիւն, 1993, (2000), Yapraciği Gören Balık («Պելկէ») հրատարակչութիւն, 2002), Isigini Söndürme Sakin, («Ատամ» հրատարակչութիւն, 2004), Ferah Tut Yüregini («Արաս» հրատարակ-



չութիւն, 2015): Ձահրատ մահացաւ 21 Փետրուար 2007-ին: Թաղուած է Շիշլիի ազգային գերեզմանատան մէջ, մտաւորականներու թաղը


**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
**Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝**  
**(626) 398-0506**

# ՃԱՓՈՆԻԿՐՕՆՔԸ՝ ՇԻՆՏՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (Ձ. ԴԱՐ)



Երբ կը խօսինք Հնդկաստանի մասին, անպայման մենք կը լինենք այդ երկրի ժողովուրդին կրօնքը՝ հինտուիզմը: Իսկ ճափոնի պարագային, այդ կրօնքը շինտոյականութիւնն է (shintoism): Ի՞նչ է այս կրօնքը, ինչի՞ կը հաւատայ եւ ինչպէ՞ս ազդած է ճափոնցի ժողովուրդի մշակոյթին վրայ:

«Շինտո» նաեւ կը կոչուի «քամի-նո-մի-չի»: Ան ազգային կրօնք մըն է, որ կը կեդրոնանայ արարողութիւններու վրայ, որպէս կայ մը հին եւ նոր ճափոնի միջեւ:



80 առ հարիւրը կը յայտնէ, որ շինտոյական մըն է, սակայն անոնց փոքր մէկ մասն է, որ գիտէ կրօնքին բոլոր օրէնքները: Երկրին մէջ կը գտնուին 81.000 մեհեաններ եւ 85.000 քուրմեր:

Այս կրօնքին հիմերէն մէկն է հոգիի մաքրութիւնը: Այս առաքինութիւնը կը համարուի կարեւոր ազդակ մը միտքի հանգստութեան: Ուրեմն, երբ մենք հոգեպէս անմաքուր ենք, պէտք է հետեւինք միջոցի մը՝ մաքրելու համար մեր հոգին: Քուրմերը կ'օգնեն մարդոց հասնելու համար հոգիի մաքրութեան:

Այս կրօնքին մէջ կը հաւատան, որ հոգին մահէն ետք կ'երթայ ստորերկրեայ աշխարհ մը, որ կը կոչուի «էնմի», ուր գետ մը կը բաժնէ մեռածները ողջերէն:

Շինտոյիզմի առաջին գրութիւնները հրատարակուած են Ը. դարուն: Այս գրութիւնները կ'ընդգրկեն հաւատալիքներ եւ դիցաբանութիւն (mythology): Իւրաքանչիւր արարողութիւն ունի իրեն յատուկ նկարագրութիւն եւ տարազներ: Անոնց պէտք է հետեւին ճշգրտութեամբ: Ճափոնցի ժողովուրդին ճշգրտութիւնը կ'արտայայտուի այս արարողութիւններուն մէջ:

Շինտո բառը կը նշանակէ աստուածներու ճամբայ: Ոգին կամ քամին կրնայ ըլլալ անկենդան կամ կենդանի մարմիններու մէջ: Քամին եւ մարդիկ փոխկապակցուած են: Այսինքն՝ անոնք կ'ապրին նոյն աշխարհին մէջ եւ կը բաժնեն նոյն բարոյութիւնները:

Թէեւ ճափոնի բնակչութեան

## ՍԵՈՒՏԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹԻՒՄ

Շարունակուած էջ 15-էն

Դոկտ. Նուրա Մանսուրի միջին տարիքի սէռուսցի մտաւորական կին մըն է: Ան պատասխանատու պաշտօնի վրայ է սէռուսական «Գափսարկ» գիտա-հետազոտական հիմնարկին մէջ: Խօսեցաւ «դրական» աշխարհին մասին, եւ թէ ինչպէ՞ս ներկայ օրերուն երիտասարդութիւնը պէտք ունի աւելի առողջ եւ նպատակասլաց կեանքի: «Պէտք չունինք հաւատալու, որ անցեալը միշտ աւելի լաւ է, ըսաւ ան: Այս դժուար եւ վտանգաւոր աշխարհի մէջ արժէ հաւատալ դաստիարակութեան, որ կ'օգնէ քեզի անդրադառնալու, թէ ինչո՞ւ կ'ապրիս այս աշխարհին մէջ»:

Դասախօսութեանն էտք մօտե-

ցայ անոր: Թէեւ զգուշ էի ձեռքս երկարելու եւ բարեւելու, բայց արդէն ան գիս կանխեց եւ ձեռքը երկարեց, ու արդէն ընթացք առաւ մեր զրոյցը:

Երբ Նուրային կը փորձէի ներկայացնել Աստուածաշունչը եւ անոր կրօնական-մշակութային արժէքները, ան յայտնեց իր հիացմունքը: «Աստուածաշունչը կարդացած եմ, երբ Ամերիկա էի՝ իբրեւ ուսանող: Աստուածաշունչին մէջ կան բարձր արժէքներ, որոնց հանդէպ ունիմ յարգանք եւ սքանչացում»:

Նուրային դէմքին վրայ կար ինքնավստահութիւն, ան շատ հանգիստ կերպով դրսեւորեց իր կեցողութիւնը՝ գիտնալով հանդերձ, որ տարբեր կրօնի եւ մշակոյթի կը պատկանէինք: «Կրօնը ճիշդ պա-

## Ազնաւոր Զիմնադրամ

Շարունակուած էջ 6-էն

«Ազնաւոր» հիմնադրամին, ինչի արդիւնքով ալ Շառլ Ազնաւորի որդին՝ Նիքոլա Ազնաւորը, որոշած է թանգարանին տրամադրել հայրիկի անձնական իրերը՝ առաջին դաշնամուրը, ոսկէ սկաւառակները, էտիթ Փիաֆի ինքնատիպ-բնատիպ սկաւառակները եւ այլն:

Թանգարանի մէջ ներկայացուելիքի մասին Քրիսթինա Սարգիսեանը չէ մանրամասնած, պատմած է, որ արդիական լուծումներով սենեակներով պիտի փորձեն

ներկայացնել Շառլ Ազնաւորի կեանքի կարեւոր դրուագները, օրինակ՝ պիտի կառուցուի երգիչի առաջին 20 քառակուսի մեթրանոց բնակարանը, որ ան անձամբ նկարած է:

«Առաջին սենեակը լինելու է աւագով անիմացիա: Աւագը սիմպոլիք է եւ ներկայացնելու է ընտանիքը, որը, ինչպէս շատ հայեր, փախել է Կոնստանդնուպոլսից: Աւագն ընտրել ենք նրա համար, քանի որ շատ հայեր Յեղասպանութեան ժամանակ մահացել են Տէր Զօրի անապատներում»,- պատմած է ան:

ըռնակով եւ բովանդակութեամբ պէտք է սորվեցնել,- ըսաւ ան: Մեր՝ իսլամներու հարցն ալ այս է ներկայ օրերուն: Եւ մեր՝ իսլամներու ներքին միջյարանուանական տագնապն ու, տակաւին, արտաքին աշխարհին հետ դժուարութիւնը կը ծագի, քանի ճիշդ ձեւով չէ, որ կ'ուսուցանենք մեր հաւատամքները»:

Նուրան մեր երկխօսութեան ընդմէջէն կը փորձէր ինք ալ «իր պատեանէն դուրս գալ»: Եւ Նուրային համար «դուրս գալը» սկսաւ ինքնիր անձէն: Եթէ անդրադարձած էր իր իրավիճակին, իր ինքնութեան, բայց նաեւ «դուրս գալով»՝ կը փորձէր հասկնալ նաեւ զիս եւ իմ ինքնութիւնս, կրօնս ու պատկանելիութիւնս:

Ռիտաի օղակայանէն կը պատրաստուիմ վերադառնալ: Գալու ատեն «մտահոգութեամբ» մտայ նոյն օղակայանը, բայց հիմա դուրս կու գամ աւելի խաղաղ: «Խաղաղ», որովհետեւ հանդիպեցայ մարդոց, որոնք կը տեսնէին, թէ՛ «կարելի չէ միայն իրենց պատեանին մէջ ապրել»: Անոնք կը փորձէին դուրս

գալ իրենց անձերէն՝ ճեղքելով «պատերը», որպէսզի տեսնեն «ուրիշը»:

Եւ արժէ նայիլ ներկայ օրերու աշխարհին:

Եթէ այսօր կան մարդիկ, որոնք կը փորձեն «պատեր» հիւսել իրենց եւ իրենց երկիրներուն համար, երեւի՝ իրենց ապահովութեան եւ բարօրութեան համար: Բայց կան նաեւ անոնք, որոնք պատերը կը քանդեն, որովհետեւ՝ «չեն ուզեր իրենց պատեանին մէջ միայն մնալ»: Եւ երեւի կը փորձեն ու կ'ուզեն տեսնել, թէ իրենց ապահովութիւնը նաեւ կախեալ է «ուրիշին» ապահովութեանէն:

Մշուտական Արաբիոյ նախաձեռնութիւնը մէկ լաւ օրինակ-փորձառութիւնն էր, որ ապրեցայ եւ հասկցայ, որ կարելի է «ուրիշը» հասկնալ, եթէ փորձես «քու պատեանիդ մէջ չմնալ»:

Եւ եթէ «դրական աշխարհ» մը չի նկատու ջատագով պիտի ըլլալ, այդ մէկը ունի իր նախապայմանը:

Թէ՛ «կարելի չէ քու պատեանիդ մէջ միայն մնալ»:

**Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝**

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Յեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ **ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆՅԻՆ**:

**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-354-5924**  
vamedia@yahoo.com

### «Ռեալը»՝ Ախոյեանների Լիգայի Գալաթակիր, Տիտղոսը Պաշտպանած Առաջին Ակումբ



Մադրիդի «Ռեալը» 12-րդ անգամ նուաճեց եվրոպական ախոյեանների գալաթը եւ դարձաւ առաջին թիմը, որը երկու տարին անընդմէջ գալաթակիր է դառնում Ախոյեանների լիգայի դարաշրջանում, իսկ Զիդանը՝ երկու տարին անընդմէջ տիտղոսը նուաճած առաջին մարզիչ:

Ուելսի մայրաքաղաք Քարդիֆում տեղի ունեցած եզրափակիչում Սպանիայի 33-ակի ախոյեանները 4:1 հաշուով առաւելութեան հասան Իտալիայի 33-ակի ախոյեան Թուրինի «Յուվենտուսի» նկատմամբ:

20-րդ ընդմիջման ֆրանսացի Զինեդին Զիդանի գլխավորած թիմի սրընթաց կոմբինացիան հեռուից կատարած հարուածով եզրափակեց պորտուգալացի Կրիշտիանու Ռոնալդուն, որն օգտագործեց Դանիէլ Կարվախալի փոխանցումը:

27-րդ ընդմիջման Իտալացի Մասիմիլիանո Ալեզրիի գլխավորած թիմը պատասխանեց խորուած յարձակուող Մարիո Մանջուկիչի յետադարձ գեղեցիկ հարուածով: «Ռեալը» կոստառիկացի դարպասապահ Կեյլոր Նաւասը չհասցրեց հետ գնալ եւ հետ մղել հարուածը:

Ընդմիջումից յետոյ Արքայական թիմը զգալի տարածքային եւ խաղային առաւելութիւնը վերածեց եւս երկու կողմ: 61-րդ ընդմիջման հեռուից կատարած հարուածով «Յուվենտուսի» իտալացի դարպասապահ Զանյուլիշի Բուֆոնին անակնկալի բերեց պրագիլացի յենակետային կիսապաշտպան, իսկ 3 ընդմիջման օտարերկրացի ձեռնարկեց Գոլբը՝ փայլուն օգտագործելով խորուած կիսապաշտպան Լուկա Մոդրիչի սուր փոխանցումը աջ եզրից:

84-րդ ընդմիջման «Յուվենտուսը» մնաց 10 ֆուտպոլիստներով: 66-րդ ընդմիջման փոխարինման դուրս եկած կոլումբացի կիսապաշտպան Խոսեան Կուարդադոն 72-րդ եւ 84-րդ ընդմիջման գոլերը զգուշացուեց ղեղին քարտերով եւ հեռացուեց:

Դրանից յետոյ «Ռեալը» խփեց նաեւ չորրորդ կողմ: Փոխարինման դուրս եկած սպանացի կիսապաշտպան Մարկո Ասենսիոն 90-րդ ընդմիջման գրաւեց Բուֆոնի դարպասը:

«Ռեալը» 59 տարում առաջին անգամ կարողացաւ նոյն մրցաշրջանում նուաճել Սպանիայի ախոյեանի կոչումն ու Ախոյեանների լիգայի գալաթը: Նախորդ անգամ Արքայական թիմն այդպիսի նուաճման հասել էր 1958-ին:

### Մանչեսթեր Եունայթեդն Աշխարհի Ամենաթանկ Ակումբն է

Մանչեսթեր Եունայթեդը Եվրոպայի ամենաթանկ ֆուտպոլային ակումբն է: Այս մասին նշուած է KPMG աուդիտորական ընկերութեան կայքում, որը կատարել է հետազոտութիւնը: Անգլիական ակումբի արժէքը գնահատուել է 3 միլիարդ տոլար:



Երկրորդ տեղում Մադրիդի Ռեալն է, որը գնահատուել է 2.97 միլիարդ տոլար, երրորդը՝ Բարսելոնան 2.76 միլիարդ տոլարով:

Յանկում ընդգրկուել է 32 ֆուտպոլային ակումբ: Հետազոտութեան ժամանակ հաշուի են առնուել ակումբների եկամտաբերութիւնը, ժողովրդականութիւնը, մարզական արդիւնքները, մարզադաշտերը, հեռուստատեսային իրաւունքների արժէքը եւ այլ չափանիշներ:

### «Ռեալ Սոլթ Լեյք» Մենեջեր Այս Մարտահրաւեր Յուրա Մովսիսեանին Կը Դարձնի Աւելի Ուժեղ

«Ռեալ Սոլթ Լեյք» գլխավոր մենեջեր Կրեյգ Վեյքըն անդրադարձել է հայ յարձակուող Եուրա Մովսիսեանին, որը մարզիչի փոփոխութիւնից յետոյ քիչ խաղաժամանակ է ստանում ամերիկեան ակումբում:

«Վերջին շրջանում Եուրային չի յաջողուում կոլ խփել, եւ փոքր հանգիստը չի խանգարի նրան: Այդ մարտահրաւերը նրան աւելի ուժեղ կը դարձնի յուզական եւ հոգեբանական առումով», - Կրեյգ Վեյքըն խօսքը մէջբերում է rslsoapbox.com-ը:

Աւելի վաղ լուրեր էին շրջանառուում, որ Մովսիսեանը դժգոհ է ակումբում իր կարգավիճակից: Նա «Ռեալ Սոլթ Լեյք» նախորդ 6 խաղերից միայն երկուսում է հանդէս եկել մեկնարկային կազմում՝ մէկ անգամ փոխարինուելով ընդմիջմանը:

### Հենրիխ Մխիթարեանի Դուբը Նպաստեց Հայաստանի Յաղթանակին՝ 5.0



Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը մայրաքաղաքի վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» ստադիոնում ընկերական խաղում մրցեց Սենթ Քիթսի եւ Նեւիսի հաւաքականի հետ եւ յաղթեց 5:0 հաշուով: Արթուր Պետրոսեանի գլխավորած թիմն ուներ հսկայական առաւելութիւն: Մարզումային ռեժիմով ընթացած հանդիպման իրադարձութիւնների մեծ մասը հիւրերի տուգանային հրապարակի մօտ էր: Երկու կողմի հեղինակ դարձաւ անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» առաջատարներից Հենրիխ Մխիթարեանը, որը փոխարինուեց ընդմիջմանը:

Հայաստանի հաւաքականը Յունիսի 10-ին Պողոսիցայում աշխարհի առաջնութեան ընտրական հանդիպում կ'անցկացնի Չեռնոգորիայի հաւաքականի հետ, որը Յունիսի 4-ին ընկերական հանդիպում կ'անցկացնի Իրանի թիմի հետ:

### Հայաստանի Ազգային Հաւաքականը 68-րդն է ՖԻՖԱ-ի Դասակարգման Աղիւսակում

Յունիսի 1-ին հրապարակուել է ՖԻՖԱ-ի դասակարգման նոր աղիւսակը: Հայաստանի հաւաքականը նահանջել է 1 տեղով եւ զբաղեցնում է 68-րդ հորիզոնականը: Աղիւսակը գլխավորում է Բրազիլիան, Արգենտինան երկրորդն է, Գերմանիան՝ երրորդը:

1. Բրազիլիա - 1715 միաւոր
2. Արժենթինա - 1626
3. Գերմանիա - 1511
4. Չիլի - 1422
5. Կոլումբիա - 1366
6. Ֆրանսա - 1332
7. Բելգիա - 1292
8. Պորտուգալիա - 1267
9. Շուէյցարիա - 1263
10. Սպանիա - 1198
10. Լեհաստան - 1198

### Արթուր Աբրահամի Յառաջիկայ Մրցակիցը Աշխարհի Ախոյեանի Կոչման Համար

Յայտնի է պրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպերմիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի նախկին ախոյեան Արթուր Աբրահամի (46-5-0, 30 նոկաուտ) յառաջիկայ մրցակիցը: Յուլիսին (15-ին կամ 22-ին) Լոնտոնում տեղի ունենալիք մենամարտում 37-ամեայ հայ բռնցքամարտիկը կը մրցի 27-ամեայ բրիտանացի Քրիս Յուբենք կրտսերի (24-1-0, 19 նոկաուտ) հետ, հաղորդում է Արթուր Աբրահամի մամուլի քարտուղար Սիրան Գրիգորեանը: Այդ մենամարտում կը վիճարկուի IBO վարկածով աշխարհի ախոյեանի տիտղոսը:

Յիշեցնենք, որ նախորդ մենամարտում Արթուր Աբրահամը Ապրիլի 22-ին Գերմանիայի Էրֆուրտ քաղաքում անցկացուած WBO-ի վարկանիշային մենամարտում մրցավարների որոշմամբ, միաւորներով պարտութեան է մատնել Լեհաստանը ներկայացնող Միլենիենում բնակուող կոսովցի Ռոբին Կրասնիկին:

### Համաշխարհային Դասակարգման Լեւոն Արոնեանը 7-րդն է

Շախմատի միջազգային ֆեդերացիան (ՖԻԴԵ) հրապարակել է համաշխարհային դասակարգման աղիւսակը Յունիսի 1-ի դրութեամբ: Հայկական շախմատի առաջատար Լեւոն Արոնեանը նահանջել է մէկ աստիճան եւ զբաղեցնում է 7-րդ տեղը: Առաջատարը աշխարհի ախոյեան Մագնուս Կարլսենն է:

Մագնուս Կարլսեն (Նորվեգիա, 2831), Ուեսլի Սօ (ԱՄՆ, 2812), Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան, 2808), Ֆաբիանո Կարուանա (ԱՄՆ, 2805), Շաքրիջար Մամեդիարով (Ատրպէյջան, 2800), Մաքսիմ Վաշյե-Լազարով (Ֆրանսիա, 2795), Լեւոն Արոնեան (Հայաստան, 2793), Վիշվանաթան Անանդ (Հնդկաստան, 2786), Հիկարու Նակամուրա (ԱՄՆ, 2785), Դին Լիժեն (Չինաստան, 2783):

Հայաստանի միւս ներկայացուցիչներից Սերգեյ Մովսիսեանը 64-րդն է, Վլադիմիր Յակոբեանը՝ 84-րդ: